

ԱՐԱՔՍ



ԿԱՐՍԻՆԻ ՌՈՂ

891.99 | 14265

12-85 | 12-85

12-85 | 12-85

12-85

891.99-93

Ա-85

ԱՐԱՔՍ

ՍՖՈՒԳԱՆԾ Է 1961 թ.

ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇ

(ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ)

~~14265~~

11
26968



ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

ՀԱՅԿԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ 1949

Հասկեր եւ Գրոցիսպիսներ
'Եկարի' ԷՌՎԷ. ՇԱՎԱՐՇԻ

ՀԱՅԿ ԳԻՄՆԱՍԻ


ՀԱՅԿ ԳԻՄՆԱՍԻ

Գրք

80632

ԱՐԱԿՏ
КРАСНОЕ ЗНАМЯ
(На армянском языке)
Արմին, Երեւան, 1949

ԱՄԵՆԱԼԱՎ ՆԿԱՐԸ



ԱՄԵՆԱԼԱՎ ՆԿԱՐԸ

Ամեն օր, երբ դասերը վերջանում էին, Աշոտիկը տուն էր գալիս դպրոցից, ճաշում էր, մի փոքր խաղում, վազվզում, ապա նստում էր գրասեղանի առջև՝ ու դասերը պատրաստում: Վերջում նա հանում էր իր դարակից խնամքով պահած նկարչության տետրը, ու գուցենրդ գուցն մատիտները և փռում սեղանի վրա, սկսում նկարել: Ինչեր ասես՝ նա չէր նկարում՝ հնգաթև կարմիր աստղ, սովետական դինվոր, ինքնաթիռ, տանկ, գնդացի, կրեմլի աշտարակներ, Լենինի դամբարանը և ուրիշ շատ բան: Ահա թե ինչու, դպրոցում թե տանը նրան նկարիչ Աշոտ էին կանչում:

Ահա թե ինչու, դպրոցում թե տանը նրան նկարիչ Աշոտ էին կանչում:

Մի օր, նկարչության ուսուցիչը 2-րդ դասարանի իր աշակերտներին տնային աշխատանք տվեց ասելով՝ նկարեցեք ով ինչ սիրում է, այն, ինչ որ ամենից թանկ է ձեզ համար: Աշոտիկը նստած էր առաջին շարքում լուռ և մտադրադ նայում էր ուսուցչին. հանկարծ նրա մտքում մի բան փայլատակեց. նա շշնջաց.

— Ամենաթանկն ու ամենասիրելին...

Աշոտիկը տուն էր եկել, մատիտները սրել էր, ձյունի նման սպիտակ տետրը փռել էր առջևը ու մտածում էր ինչպես սկսել: Նրա աչքերի առջև կենդանի պատկերանում էր այն սիրելի նկարը, որին հանդիպում էր նա ամեն տեղ, զրքերի մեջ, պատերին:

Այժմ Աշոտիկը նայում էր անթարթ իրենց տան պատին փակցրած այն մեծադիր նկարին: Ամեն ինչ հեշտ էր

Նկարել, բայց մեծ մարդին, որին այնքան, այնքան էին սիրում միլիոն-միլիոն մարդիկ և ինքը Աշոտիկը, հեշտ չէր նկարել:

Աշոտիկի սիրտը տրոփում էր, ձեռքը դողում ու չէր համարձակվում թղթի վրա գծեր քաշել:

Հանկարծ կարծես պատին փակցրած նկարի շուրթերը շարժվեցին և նա ասաց Աշոտիկին.

— Նկարիր համարձակ, մի վախենա:

Աշոտիկի ձեռքերը ուժ ստացան, սկսեց համարձակ գծել թղթի վրա:

Նա սկզբում գծեց գլխի մասը, ճակատը ու կանգ առավ նորից: Այս ի՞նչպես, ի՞նչպես պիտի արտահայտեր այն խելացի աչքերի փայլն ու ժպիտը:

Նորից կարծես նկարի շուրթերը շարժվեցին և այն մեծ մարդն ասաց.

— Նկարիր համարձակ, մի վախենա:

Ամեն անգամ Աշոտիկն ուժ էր ստանում, ոգևորվում ու նկարում: Աշոտիկից երկու տարով մեծ քույրը՝ Սոնան դնում էր գալիս ու հարցնում.

— Աշոտիկ, այդ ի՞նչ ես նկարում այդպես տարված:

Աշոտիկը քրոջը չէր պատասխանում: Միայն իր մըտքում ասում էր «Հետո կիմանաս»:

Աշոտիկը մի քանի օր շարունակ այդպես տարված նկարում էր, նկարածը թղթերի մեջ պահում, դպրոցից տուն գալիս, նորից նկարում:

Ահա մի առավոտ նա շատ վաղ արթնացավ. տնեցիները դեռ քնած էին, նա զգույշ մոտեցավ սեղանին և շարունակեց իր սիրած աշխատանքը: Նկարում էր ու նկարում մասիտը ձեռքում սեղմած, հանկարծ նա հետքաշվեց ուրախացած — թղթի վրա գծված էր պարզ ու պայծառ մի նկար:

Դա Մեծ Լենինի նկարն էր։
Կարծես նկարի շուրթերը նորից շարժվեցին ու
ասաց.

—Ապրես, Աշոտիկ, այդպես միշտ համարձակ եղիր...

Աշոտիկը խնամքով պատին փակցրեց իր նկարած
Լենինին, երկար ժամանակ քարացած նայում էր նկարին
ու չէր հավատում իր աչքերին, որ այդ ինքն էր իր սե-
փական ձեռքով նկարել։

Աշոտիկը չէր կարողանում նկարի մոտից հեռանալ.
ողջ ժամանակ Լենինի հալրական բարի հայացքը նրա
վրա էր. ասես գրուցում, կատակում էր նրա հետ.

—Այ թե լավ նկարիչ ես դու, Աշոտիկ, այժմ մն
պիտի նկարես...

Այժմ, այժմ կրկնում էր Աշոտիկը ու երջանկություն-
նից չէր կարողանում պատասխանել, հանկարծ վրա բերեց.

—Սիրելի Ստալինին։

Հայրիկը, մայրիկը, քույրը՝ Սոնան արթնացան ու
տեսան պատին՝ Լենինի նկարը։

—Այս դու ես նկարել, Աշոտիկ, — հարցրեց հայրիկը։

Տղան գլխով արեց։

—Ապրես, հաջող ու գեղեցիկ ես դուրս բերել Մեծ
Լենինի նկարը, — շարունակեց հայրը։

—Որքան նման է, — բացազանչեց Սոնան...

—Ի՞նչ բոլոր նկարների մեջ ամենահաջողը, ամենալա-
վը Լենինի նկարն է, — ասաց մայրը և կրծքին սեղմեց
տղայի գլուխը։

Իսկ պատից նայում էր Լենինը, խելացի, ժպտուն
աչքերը կկոցած։

ՆԱԿԱՆԱՎՈՐ ՕՐ

Հոռնվար ամիսն էր, ցուրտ ու ձյուն: Ձյան հաստ շերտով ծածկվել էին փողոցները, տները, բակերը, ինչպես նաև 7-րդ դպրոցի բակը և մեւտքը:

Երրորդ դասարանի պիոներական օղակավար Ռուբիկը հավաքեց իր օղակի անդամներին և համառորեն նայելով նրանց աչքերին տասց.

— Գիտե՞ք, վաղը ինչ նշանավոր օր է:

— Այո, գիտենք, — պատասխանեցին պիոներները, խորհրդավոր իրար նայելով:

— Ես մտածել եմ այդ օրը նշանավոր դարձնել... տասց Ռուբիկը շատ լուրջ:

— Ինչպե՞ս, — անհամբեր հարցրին պիոներները:

— Դուք կարո՞ղ եք վաղը շատ շուտ արթնանալ ու շուտ դպրոց գալ:

— Էլ ինչ պիոներներ, որ չկարողանանք շուտ արթնանալ ու շուտ դպրոց գալ, — պատասխանեց Արտաշեսը:

Ընկերների պատրաստակամությունը ստուգելուց հետո, Ռուբիկը շարունակեց.

— Ամեն մեկդ կվերցնեք մի-մի թիակ և պիոներական ճշտությամբ կհավաքվեք այստեղ, դպրոցի բակում:

Այդ օրը Ռուբիկի պիոներական օղակը լուրջ խնդիր ստացավ: Ռուբիկն առավոտը շատ վաղ արթնացավ, արագ հագնվեց, իրենց փայտանոցից հանեց ձյունը մաքրելու

Թիակը, դրեց ուսին ու բռնեց դպրոցի ճամփան: Իսկ ձյունը թափվում էր ու թափվում, ասես երբեք չէր վերջանալու: Ռուբիկը դեռ դպրոցի մուտքին չհասած, տեսավ Արտաշեսը տաք գլխարկը մինչև ականջները հագած, վազում էր հեծին:

— Ընկեր օղակավար չեմ ուշացել այդպես չէ՞, — բացադանչեց նա:

— Պիոներական խոսքը կատակ հո չէ, — ժպտալով պատասխանեց Ռուբիկը: Հետո եկավ Սուբիկը իր սահնակով: Եկավ Հակոբիկը մի մեծ թիակ ձեռքին, ապա Զավենը, Վաչիկը: Հավաքվեց պիոներական օղակի 10 անդամ: Ռուբիկը որպես ղեկավար կարգադրեց, թե ով որտեղից պետք է սկսեր ձյունը մաքրել և ուր պիտի թափեն:

Ռուբիկը թիակը խրեց ձյան հաստ շերտի տակ, հենց մուտքի մոտից, հոպ-հոպ անելով: Արտաշեսը, Հակոբիկը ձյունը լցնում էին Սուբիկի սահնակի մեջ, Սուբիկն էլ սղդալով տանում էր ձյունով լիքը սահնակը և դատարկում դպրոցի բանջարանոցի տեղը: Սպիտակ ձյունով ծածկված դպրոցի բակում այնպիսի աշխուժություն էր տիրում, այնպիսի աշխուժություն: Այնպես հեշտ էր կուլեկտիվ աշխատանքն ընթանում, այնպես ուրախ, ասես ոչ թե 10-ը հոգի, այլ 100 հոգի էին այնտեղ աշխատում: Մեկը մյուսի հետ մրցում էր, մեկը մյուսին օգնում, որ շուտով ձյունը մաքրեն:

Խնձորի պես կարմրել էին նրանց այտերը, նրանք տաքացել էին, քրտնել, ինչպես ամառվա շոգին: Մի քանիսը նույնիսկ հանել էին վերարկուները:

— Ես վերջացրի, — աղաղակեց Արտաշեսը, վերջին ձյունը թափելով:

— Ես էլ վերջացրի, — վրա բերեց Հակոբիկը թիակը մի կողմ նետելով և ձեռքերը շփելով:

—Ջյուն, ձյուն տվեք տանեմ, թափեմ,—կատակում էր Սուրիկը դատարկ սահնակը սրա նրա մոտ վազեցնելով։ Երկու ժամ չանցած դպրոցի բակը աղատ էր ձյունից, սեխն էր տալիս մաքուր դետինը։ Աշխատանքը ավարտելուց հետո այժմ էլ նրանք ձյունը մաքրում էին իրենց վրայից ու գոհ, ժպտացող հայացքով միմյանց նայում։ Ռուբիկը հավաքեց ճակերներին և ասաց խոր հարգանքով։

—Իլյիշը սիրում էր կոլեկտիվ աշխատանքը, հիշում էք երբ մենք կարդում էինք նրա կյանքից պատմվածքներ...

—Իլյիշը շաբաթօրյակի ժամանակ,—աղաղակեց Արտաշեսը ընդհատելով Ռուբիկին,—բանվորների հետ ծանր ու մեծ դերաններ էր կրում, այնպես աշխույժ...

—Իսկ մենք ի՞նչ ենք արել, ձյուն ենք մաքրել էլի,—դժկամեց Սուրիկը։ —Ոչինչ, ուր մեծանանք ավելի մեծ գործեր կկատարենք,—պատասխանեց Ռուբիկը ու շարունակեց,—այսպիսի մի ցուրտ ու ձյուն օր, 1924 թվի հունվարի 21-ին մեռավ ամենքիս սիրելի Իլյիշը—Լենինը, այդ օրը միշտ կհիշվի...

Պիոներները գլխահակ կրկնեցին.

—Ամենքիս սիրելի Իլյիշը—Լենինը...

Նրանք հիշողութուններով տարված, չէին նկատել, որ իրենց շուրջը հավաքվել էին աշակերտները և հարցնում էին միմյանց.

—Այս ո՞վ է մաքրել բակի ձյունը, չէ որ դռնապահը հիվանդ է։

—Մեր օղակն է մաքրել, —ասաց Սուրիկը հպարտ շեշտով։

—Ա՛յ թե լավ գործ եք կատարել, պատասխանեց 4-րդ դասարանի մի աշակերտ, ապա ամեն կողմից սկսեցին հարցնել, ո՞վ մտածեց առաջինը։

Ջակերները մատները պարզեցին Ռուբիկի վրա։

Ամենքը հիացած նայում էին այդ վառվռուն, համարձակ
պլոններին, որի լուռ հալացքում նրանք կարդում էին՝
իսկ դուք ի՞նչ եք արել: Եվ ամեն մեկն իր մտքում ամի-
սոսում էր, թե ինչու ինքն էլ չէր մասնակցել այդ
լավ գործին: Այդ օրը դպրոցում արագ տարածվեց երրորդ
դասարանի պիտներական օղակի կատարած գործի լուրը:
Ուսուցիչներն ասում էին աշակերտներին.

— Օրինակ վերցրեք Ռուբիկի օղակից: Նրանք Իլյի-
չի պատվին, Իլյիչի օրինակով շաբաթօրյակ կազմա-
կերպեցին:

ԵՐԶԱՆԻԿ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԸ

Արեւիլը կրակ է թափում քաղաքի վրա: Ամառ է, շոգ է Երևանում: Իսկ այնտեղ ձորում, ուր Զանգուն է հոսում զրնգալով, ուր կանաչ պուրակն է փռված, ստվեր է ու զով:

Ահա այդտեղ է նորակառույց մանկական երկաթուղին:

Օրը կիրակի է: Փունջ-փունջ երեխաներ, իրենց տոնական զգեստները հագած, ծնողների ուղեկցությամբ եկել էին այստեղ ուրախ դրոսանքի: Նկել էին կարմիր վզկասներով առույգ պիտներներ: Նրանց համար կադմակերպված են սպորտային բաղմաղան խաղեր՝ ֆուտբոլ, վալեյբոլ: Փոքրերը ճիշտ ծղրտոցով ճոճվում են ճոճանակներում: Ստվերոտ ծառուղիներում վաճառում են զովացուցիչ ջրեր, պաղպաղակ: Երեխաները թիթեռների նման վազվզում են այս ու այն կողմ, ուզում են հասնել ամեն խաղի, ուզում են հիանալ ամեն ինչով:

Բայց ամենից գրավիչը մանկական երկաթուղին է: Կապույտ ծուխ արձակելով, սուլելով գնացքն է անցնում գետին զուգահեռ ուղիներով, ամեն անգամ իր հետ տանելով շատ զբոսասեր մանուկներ ու պատանիներ: Այստեղ փակցրած է չվացուցակ, գնացքը երթեկում է ուղիղ ժամը 10-ից:

Այնտեղ կապույտ կամարի տակ, կայարանապետն է նստում, ընդամենը 16 տարեկան մի պիտեր՝ Վազգեն:

Թաթիկյանը: Երեկ նա դպրոցական քննություններն
ավարտեց հաջող, այսօր իր պաշտոնում լուրջ ու կար-
գապահ, հսկում է, որ գնացքի երթևեկությունը լինի
կանոնավոր, որ Զանգվի գեղատեսիլ ավերով շատ—շատ
երեխաներ շրջագայեն:

Մանկական երկաթուղու բոլոր պաշտոնյաները
պատանիներ են: Ահա Արուսը և Սոնան՝ ժիր խնդերես
պիտներներ, փութկոտ քայլերով բարձրացան կարմիր,
կապույտ ներկած վագոնները: Նրանք սովորական
զբոսնողներ չեն, նրանք կոնդուկտորներ են: Մինչև
գնացքի մեկնելը 20 րոպե կա: Նրանք անհանգիստ վեր-
ու վար են անում, ստուգում են գծերը, վագոնների
մաքրությունը:

Փուհ-փուհ փնչալով, շոգեկառքը միացավ վագոննե-
րին: Մեքենավարը՝ սևաչյա մի պատանի, ճակատի քրք-
տինքը սրբեց, կարծես իր շունչն է ելնում շոգեկառքի
կաթսայից: Նա այնպես գոհ է, որ ինքն է գնացքը վա-
րում, ընթացք տալիս նրան: Կողքին կանգնած է օգնա-
կանը՝ պիտներ Կառլենը. ձեռքերը մրոտ են, աչքերը վառ-
վում են աշխատանքի ադնիվ կրակով:

Առաջին դանդը հնչեց:

Ուղեվորդները տոմսերը ձեռքերի ավերում սեղմած՝
խոնավեցին վագոնների դռների մոտ: Արուսն ու Սոնան
վագոնների դռների մոտ կանգնած, ստուգում են տոմսե-
րը և ժպտալով, քաղաքավարի ներս հրավիրում ուղե-
վորներին:

—Խնդրեմ, համեցեք...

—Տատի, այստեղ եկեք,—կանչեց Արուսը մի ծեք
կնոջ, որն իր երկու թովռան թոռների հետ բարձրանում
էր գնացքը:

—Ապրեա, —հիացմունքի ժպիտը դեմքին, ասաց պա-

ռաւիւր, ոտից դլուխ չափելով Արուսիկն: Ապա դարձաւ Թորոսիկ և Արծվենիկ իր թոռներին:

— Ճանաչեցեք այս պիոներին, որ այսքան քաղաքավարի ու կարգապահ է իր պաշտոնի մեջ, ճանաչեցեք սովետական աղատ Հայրենիքում սնված պատանուն:

Այս ասողը հայրենադարձ 60-ամյա Սոֆիա Միրիջանյանն էր:

— Մորաքույր, դուք էլ այս նստարանին նստեցեք: Իսկ դուք, երեխաներ, նրա կողքին, — մյուս կողմից հընչում է Սոնայի ձայնը:

Հաճելի, մաքուր վագոններում փափուկ, հարմար նրստարաններին տեղավորվում են ուղեւորները: Կոնդուկտորները հետևում են, որ ոչ ոք ոտի վրա կանգնած չմնա:

Ջրհգ... Հնչեց երկրորդ դանդը: Դրան հաջորդեց դիւսուկոց. մւ... մւ... Գնացքը շարժվեց: Երեխաներն ուրախ նայեցին միմյանց: Գնում ենք...

— Կապույտ դրոշը պարզած զգաստ կանգնել է սլաքավար պատանին: Նրա շուրթերը շշնջում են:

— Գնացեք ապահով...

Գծի աջ կողմում Ջանգուն է հաճելի խշշոցով անցնում, ձախ կողմում ընկուզենի, թթենի, բալենի և այլ պտղավետ կանաչ ծառերն են հով սփռում շուրջը:

Եվ այդ հաճելի ճանապարհորդության պահին որքան վառ ու չքնաղ երազներ են ծնվում պատանի ուղեւորների մեջ, որքան ազնիվ խոհեր՝ իրենց է՛լ ավելի պայծառ ապագայի մասին:

Արուսն ու Սոնան, իրենց պոստում կանգնած, մաքուր սլացել են առաջ և որպես չափահաս, փորձված երկաթուղայիկներ երթևեկում են Սովետական Հայրենիքում, անժայրածիր երկաթուղիներով անթիվ-անհամար

ուղեւորները են սպասարկում և որքան քաղաքներ ու
անծանոթ հեռուներ են ճանաչում: Հապա այն սևաչյա
մեքենավարը, որ շոգեկառքի հնոցի մոտ իր վաղվա օրն
է կուփում. նա տիրապետել է տեխնիկային, դարձել ան-
վանի երկաթուղային, հնարել է մի նոր շոգեկառք, որը
կախժակի արագությամբ հայրենի երկիրն է չափում: Նրան
ողջ Հայրենիքն է ճանաչում: Իսկ այս պատանի ուղե-
ւորները ծիծաղկոտ դեմքերին, շողշողուն աչքերում որ-
քան մտքեր ես կարդում դեռ աշխարհին անհայտ...

Իր մայրիկի կողքին նստած վագոնի պատուհանից
դուրս նայող, սպիտակ բանտիկով, ոսկեգույն մագերով
այն թիթեռնիկ աղջիկը ուղում է շուտով մեծանալ,
Արուսի և Սոնայի նման, երթևեկող վագոններում
արագ-արագ ներս ու դուրս թողնել ուղեւորներին:
Այնքան հաճելի է հարցնել ամեն մեկին. «Ձեր տոմար»...
Եվ, որ ամենակարեւորն է, նա պիտի պահպանի խիստ
կարգապահություն, մաքրություն վագոններում:

Փոքրիկ երագողի դիմաց նստած է խաժակն մի պիո-
ներ, որը հայացքը չի պոկում գետի ընթացքից: Դա Արա-
յիկ Հակոբյանն է: Նա ուղում է գետերով, ծովերով ճա-
նապարհորդել, ոչ իբրև հասարակ ճանապարհորդ, այլ
որպես հսկա նավի նավապետ: Աչքերի առջև պատկերա-
նում է ինքը ծովայինի համազգեստով, որ կանգնած
է տախտակամածի վրա, դիտակով չափում ծովի անսահ-
ման հեռուները: Ծովի ահեղաշունչ փոթորիկներից նա
չի վախենում, չէ՞ որ սովետական մարդը բնության բոլոր
տարերքները հաղթող պետք է լինի...

Ձախակողմյան պատուհանի մոտ նստած սեւագանգուր
բոցկլտուն աչքերով պատանին՝ գովասանադրով փոխա-
դրվել է Յ-րդ դասարան: Նա ուղում է օդաչու դառնալ,
աստղերին հասնել և այնպիսի թռիչք սահմանել, որ ողջ
աշխարհի զարմանքը շարժի...

Գնացքը սլանում է: Բաց պատուհաններից փչում է
շոժը: Պատանի ուղեւորները և հրճվում են և երազում,
ուզում են շուտով մեծանալ, հասնել, անցնել իրենց հայ-
քերին բոլոր-բոլոր ասպարեզներում առաջավոր լինել:

Ո՛ւ... Ո՛ւ... Գնացքը սուլեց՝ կանգնեց կառամա-
տույցում: Ուղեւորները սթափվեցին, վեր թռան:

—Առանց խոնվելու, հերթով իջեք,—զգուշացնում են
Արուսը և Սոնան:

—Իր թոռնիկների ձեռքերից բռնած, ծիծաղելով
առաջին վագոնից իջնում է Սոֆիա Միրիշանյանը և
շշնջում:

—Սովետական Հայրենիքի այս մեկ հաճույքն էլ ճա-
շակեցինք:

—Տատի, վաղն էլ կգանք, այնպես չէ՞,—հարցնում են
թոռները:

—Կգանք, էլի կգանք,—պատասխանում է տատը:

—Ձեր տոմար,—նորից հնչում է Արուսի ու Սոնայի
վճիտ ձայնը:


Կրկին սուլում է գնացքը ու սլանում Զանգվի դե-
ղատեսիլ ափերով, իր հետ տանելով երջանիկ ուղեւոր-
ների նոր, զվարթ խմբեր:

ՈՒՐԱԽ ՊԻՈՆԵՐՆԵՐ

14205

II
26968





ՈՒՐԱՆ ՊԻՈՆԵՐՆԵՐ

Ամառ էր, կանաչ, ծաղկավետ բլրի ստորոտին սպիտակին էին տալիս վրանները, այդտեղ պիոներական ճամբարն էր: Քաղաքի շոգից, աղմուկից հոգնած պիոներները եկել էին բնության գրկում հանգստանալու: Վրաններից ոչ շատ հեռու զուլալ և ուրախ գետակն էր վազում, իսկ շիմացը զով և ստվերոտ անտառն էր փռված:

Պիոներները ամբողջ օրը զվարթ խաղում, վազվզում էին, դաշտ ու անտառ ոտքի տակ առնում:

Կեսօր էր: Վրանից դուրս եկավ մի փոքրիկ պիոներ. նա երեկ էր եկել քաղաքից, արևը դեռևս նրա մաշկը չէր այրել, գունատ էր, աչքերի տակ կապույտ գծված:

Տղան դարմացած չորս կողմն էր նայում. այդտեղ բնությունը այնքան գեղեցիկ էր ու երկինքն ավելի կապույտ, արևն ավելի պայծառ, օդը մաքուր ծաղիկների բույրով լի:

Ահա թե ինչու էր մայրիկն այնպես համոզում. «Փնա Աշոտիկ, այնտեղ բնության գրկում դու շատ կառողջանաս, մենակութունը բոլորովին չես զգա, այնտեղ քեզպես պիոներներ շատ կան»: Մտածում էր տղան հոնքերը վեր-վար անելով:

Նա մի քանի քայլ առաջ գնաց զգուշությամբ, ասես ափսոսում էր կանաչները ոտքի տակ տրորել, մեկ էլ ալանջի տակ մի ուժգին ճիչ.

— Աշոտ, դնում ենք գետը, արի...

Այդ ով իսկույն անունս իմացավ:

Աշոտը դարմացած էտ դարձավ, տեսավ իրենց
դպրոցից մի ծանոթ պիոներ.

— Աշոտ գնում ենք, արի, — կրկնեցին շատ ձայներ,

Դրանք մի խումբ պիոներներ էին, որ աղմկելով դեպի
գետակն էին վազում:

Աշոտը մի փոքր տատանվեց, շուրջը նայեց, տեսավ
մենակ մնաց.

— Ի՞նչ է, ես չեմ կարող, — շնչաց ու ինքն էլ վազեց:

Քարերին դարկվելով, փրփրած գետակն էր հոսում
կանաչ ամրոտ, անուշ երգելով: Աշոտը շնչեց գետափի
սառնորակ օդը, մեկ էլ տեսավ տղաներն իրար ետևից
սազերի նման շուրը թափվեցին ու չոփ-չոփ լողանում
էին: Ընկերներն ու ալիքները գրկախառնված հոսում էին
նրա աչքի առջևից:

— Աշոտ, եկ մեզ հետ լողացիր, — կանչեց չարածճի
Սեթոն, փահ-փահ անելով, նա ջրումն էլ հանգիստ չէր մնում,
մեկի ոտքից էր քաշում, մյուսի գլուխն էր ջրի մեջ սուզում:

Կարծես գետակն էլ խշշալով հրավեր կարդաց.

— Աշոտ, եկ լողացի... .

Աշոտը շրթերը հանեց, ուղեց ոտքը դնել ջրի մեջ, երբ
Սեթոն նրա ոտքից քաշեց ու, կլլթ, Աշոտը ջուրն ընկավ:

— Աշոտ, լող տո՛ւր, — ամեն կողմից գոչեցին:

Սկզբում Աշոտը սառը ջրում սաստիկ դողաց, ասամ-
ները դարկվեցին իրար, բայց որ նայեց ընկերներին,
ձեռքերն ու ոտքերը նրանց նման շարժեց, հետզհետե վարժ-
վեց, մարմինը տաքացավ ու ջրի հետ թեթև սահեց:

Անհանգիստ տղաները ջրից դուրս էին գալիս արևի
տակ շողշողում, ավազների վրա պառկում, չորանում, նո-
րից ջուրը նետվում:

Աշոտը ջրից դուրս եկավ թարմացած ու զվարթ, այժմ
էլ ընկերների հետ, անորժականները բացված, վազում էին
ճաշի:

Տանը մայրիկն անհանգստացած, աջ էր դառնում,
ձախ էր դառնում և ասում էր.

—Աշոտ ջան մի բան կեր, իսկ Աշոտը դժկամելով
հետ էր մղում մայրիկի պատրաստած ճաշերը:

Այստեղ, ընդհակառակը, Աշոտը աջ դառնում ձախ դառ-
նում, ուտել էր ուզում ու անհամբեր սպասում ճաշի
հրավերին:

—Այ թե մայրիկն իմանա, ինչքան կուրախանա,—
մտածում էր Աշոտը:

Մի քանի օրում Աշոտը դաշտ ու անտառին այնպես
ընտելացավ, ինչպես իրենց տանը, այլևս նա չէր սպա-
սում, որ ընկերներն իրեն հրավիրեն: Ինքն էր նրանց
հրավիրում անտառում զրոսնելու, գետում լողանալու,
կամ հեռու ընկած լեռնադրյուրից ջուր խմելու:

Ամենաուրախ տեղը անտառն էր, այստեղ ծառերի
ճյուղերին ամեն տեսակ թռչուններ էին ծլվլում՝ ծիվ-ծիվ,
ճիկ-ճիկ...

Անտառի մշտական պահակ քամին էր ամեն կողմ
շրջում, սվսվում:

Հանկարծ անտառը լցվում էր պիոներների ուրախ
աղմուկով, նրանք իրենց ձայներն աշխատում էին նմա-
նեցնել թռչունների ձայներին, քամու սվսվոցներին:

—Այս իմ ծառն է:

—Այս էլ իմը,—կանչում էին ու ամեն մեկն իր սի-
րած ծառի տակ նստում, կամ պառկում, հանգստանում էր:

Աշոտը ընկերների հետ կատակներ էր անում, մեկ էլ
ծառերի ետևից կանչում էր.

—Նապաստակ, նապաստակ...

—Ո՞ւր է, ո՞ւր է,—տեղերից ցատկում էին ընկեր-
ներն ու նապաստակին փնտրում:

Իսկ Աշոտը հանդիստ կանգնած ծիծաղում էր:

Կամ մտնում էր թփերի մեջ խշխշացնում, արջի նման
մրթմրթում ու գաղտագողի նայում տեսնի ընկերները
ինչ կանեն:

—Հը՞ վախեցաք,—ասում էր նա,—գլուխը հանում
թիփերի միջից։

Երբ հնչում էր պիոներական փողը, պիոներական
ուրախ խմբերը անտառից դուրս գալով դիմում էին դե-
պի վրանները։

Գիշերն էլ իր հետաքրքրությունը, գեղեցկությունն
ունենր, այստեղ, երբ մութը պատում էր անտառ ու
բլուր, այդ ժամանակ բլրալանջին պիոներական խա-
րույկն էր բոցավառվում։ Չվարթ թիթեռների նման պիո-
ներները հավաքվում էին խարուկի շուրջը՝ դեմ-
քերը խարույկի բոցով լուսավորված։ Սկսվում էր հետա-
քըքի գրույց Կրասնոդոնի երիտասարդ գվարդիայի մա-
սին, Օլեգ Կաշեվոյի, Սերգեյ Տյուլենինի, Լյուբով Շեվ-
ցովայի և մյուս պատանի հերոսների վառ ու կենդանի
պատկերներն էին անցնում նրանց աչքերի առաջից,
նրանց կրծքից հիացմունքի բացահայտություններ էր
դուրս թռչում։

—Ինչպիսի հերոս պատանիներ...»

Երբ դրույցը վերջանում էր, այժմ էլ ձեռք ձեռքի տը-
ված պար էին բռնում խարույկի շուրջը, թռչկոտում, երգում։

Նրանց ուրախ երգերին անտառն էր արձագանքում։
Իսկ մութ լեղակազույն երկնքում աստղերն էին հան-
դարտ ցուցլում։

Ինչ լավ, ինչ ուրախ է այստեղ, —մտածում էր Աշոտը
և չէր ուզում ոչ գիշերը վերջանալ, ոչ բոցավառվող խա-
րույկը մարել։

Գիշերը խորանում էր, խարույկը մարում, պիոներները
գնում էին վրանների տակ մուշ-մուշ քուն մտնում։

Մեկ ամիսն անցավ աննկատելի, Պիոներական նոր
խմբեր եկան ճամբարում հանգստանալու։ Հները տեղերը
զիջեցին նորերին։ Այժմ էլ Աշոտի համար դժվար էր

քնուլթյունից բաժանվել, մանավանդ ուրախ պիտներներից,
Վերջին անգամ նա ընկերների հետ գնաց շրջեց սի-
րած վայրերը՝ այն, որ դրադ էին բռնում մի շնչում վա-
զում կլոր քարի մոտ, այդ օրն էլ վազեցին, գետակում մի
կուշտ լողացան, անտառ ու դաշտ ոտքի տակ առան, հետո
էլ դաշտի գույնգույն ծաղիկներից գեղեցիկ ծաղկե-
փնջեր կաղմեցին:

Լուսադեմին իրենց ճամպրուկներն առած ավտո
նստեցին:

Աշուտը հարուստ տալավորություններով թարմացած,
կազդուրված, տուն վերադարձավ:

Նա այն պիսի ուժով դուռը թակեց ու մայրիկի գիրկն
ընկավ, որ մայրը շիտթվեց, չէր հավատում աչքերին. գու-
նատ ու թույլ Աշուտի փոխարեն մոր գիրկն էր եկել
արևից այրված, բոցկլտուն աչքերով, ժիր շարժումներով
մի նոր Աշուտ:

Մոր գեմքն ուրախությունից փայլատակեց, նա
տղայի գլուխը սեղմեց կրծքին ու բացականչեց.

— Աշուտ, իմ պիտներ տղաս, չէիր ուղում գնալ, այժմ
տես ի՞նչքան ես կազդուրվել:

ՀԱՐԳԱՆՔ

Ձմեռ էր, երեկո, ձյունը թափվում էր, ծածկում ողջ քաղաքը ու ցուցվում էլեկտրական լույսերի տակ:

Նեղ նրբանցքով ձյան վրա, ոտնահետքեր թողնելով, քայլում էր մի պառավ կին՝ թեմի տակ մի կապոց:

Շտապելուց նա հեռում էր, երբ հասավ նրբանցքը հատող լայն փողոցին ուղեց թեքվել աջ, ոտքը սայթաքեց ու, թրրը մի, փռվեց...

Այդ ժամանակ դիմացի շենքից դուրս վազեց 14—15 տարեկան մի պատանի ու տեսնելով ձյան վրա մեկնելիս մարդուն, վազեց նրա կողմը:

Մոտեցավ, տեսավ պառավ կին է, անմիջապես երկու ձեռքերը որպես ուժեղ հենարաններ դրեց նրա մեջքի տակ ու զգուշությամբ բարձրացրեց:

— Տատի ջան, աստ որտեղդ ցավեց, — հարցրեց տղան կարեկցաբար նայելով պառավի աչքերին:

Պառավն աչքերը ճաճալացրեց, շունչ քաշեց և նրա առաջին հարցը եղավ.

— Ո՞ւր է կապոցս...

— Այստեղ է տատի, անհող մնա, — հնչեց տղայի վճիտ դուրեկան ձայնը, ցուց տալով կապոցը:

Ասկա տղան սկսեց փութաշանորեն ձյունը մաքրել պառավի շորերի և կապոցի վրայից ասելով.

— Տատի, ինչո՞ւ զգուշ չեիր քայլում, ոտդ հո չի ցավում, տես, կարո՞ղ ես քայլել:

—Հայրենիքիս հողն էլ, ձյունն էլ թափիշեն փափուկ են, մի քիչ մեջքս կցավի, այս էլ հին ցավ է, այնտեղեն բերած եմ, սա էլ կանցնի,—պատասխանեց պառավը շշտակի նայելով տղայի աչքերի մեջ։

Տղան իսկույն գլխի ընկավ և ավելի մեծ հարգանքով լցվեց դեպի պառավը և հարցրեց։

—Տատի, նոր եկածներից եք, այնպես չէ՞...

—Այո դավակս, նոր եկածներեն ենք...

—Տատի ջան, հենվիր իմ թեփին, որտեղ ես ապրում, ես քեզ կուղեկցեմ մինչև ձեր տուն,—նորից հնչեց տղայի դուրեկան ձայնը։

Պառավն ասես երազի մեջ լինեք, զարմացած նայում էր տղայի աչքերին, որ շողշողում էին ինչպես երկու ուղեցույց պայծառ աստղեր։

—Ես... ապրում եմ Լենինի 50... բայց չեմ ու... դեք քեզ նե... դու... թյուն տալ...

Հուզմունքից բառերը դուրս թռան պառավի շրթերից կտրտված։

—Ինձ համար դա հաճույք է և ոչ թե նեղություն,— պատասխանեց տղան աշխույժ։

Ձյուն էր, խաղաղ երեկո, քայլում էին նրանք Լենինի փողոցով, մեկը՝ պատանին հոգածու ժպիտը դեմքին, մի ձեռքին կապոցը, մյուս ձեռքին պառավն էր վստահորեն հենվել, քայլում էր կամացուկ պատմում։ Այդ օրը լրացել էր նրա թոռնիկի՝ Հակոբիկի հինգ տարին, պառավը տնեցիներից թաքուն գնացել էր խանութ, նվերներ գնել և այժմ տուն էր տանում, որ թոռնիկին ուրախացնի։

Իսկ պատանին և լսում էր, և՛ անհամբեր շենքերի համարները հաշվում, որպեսզի տատը շուտով թոռնիկին տաք նվերները։

—Հիսուն... հանկարծ բացագանչեց տղան ուրախ։

—Այս է զավակս, — մոռտքի մոտ կանգ առավ պառավը:

—Եկ, գնաւք մինչև ձեր դուռը, — դիմեց տղան քաղաքավարի:

—Ախ զավակս շատ նեղություն տվի, միթե պարտական ես... պատասխանեց պառավը աղերսող ձայնով:

—Այո, պարտական եմ, որովհետև դու ոչ միայն Հակոբիկի, այլև իմ և թե ամենքիս տատն ես, — հնչեց տղայի համարձակ և համոզիչ ձայնը:

Պառավն այլևս բառ չգտավ պատասխանելու, նորից հենվեց տղայի ուսին և լուռ բարձրացան 2-րդ հարկի աստիճաններով: Երբ դուռը բախեցին — բացվեց, և շեմքում կանգնեց երիտասարդ մի կին, որը հարցական նայում էր մերթ պառավին, մերթ տղային:

—Հուսածին, այս պատանին ինձ հարգեց, բերավ ձյուների միջով, — դարձավ պառավը հարսին:

Իսկ պատանին կապոցը տվեց հարսի ձեռքը:

—Համեցեք ներս, համեցեք... մինչ հարս և սկեսուր նրան սիրով ներս էին հրավիրում, տղան զվարթ ցատկալիցով մտավ ասաց, տալա ավելացրեց, — ես շտապում եմ, — և գնաց դեպի աստիճանները:

—Չսպասեցիր դոնե երեսդ տեսնեի, շնորհակալություն հայտնեի, անունդ իմանայի, անունդ... կանչում էր պառավը տղայի ետևից:

—Պիտներ, — պատասխանեց տղան ու արագ իջավ աստիճաններից:

—Պիտներ, աղվոր պատանի, — կրկնեցին պառավն ու հարսը հիացմունքի ժպիտը դեմքերին:

Ու այնուհետև պառավն ամեն տեղ փնտրում է նրան, ամեն պատանու մեջ տեսնում քաղաքավարի, հարգանքով աստղանման աչքերով այն պատանուն ու շնչում:

—Պիտներ, աղվոր պատանի...

ՆՎԵՐԸ

Նրկու պիտներ թակեցին այն դուռը, որտեղ ապ-
րում էր վերջերս արտասահմանից հայրենիք վերադար-
ձած մի ընտանիք:

Դուռը բացվեց և շեմքին երևաց համակրելի դեմքով
մի ծերունի:

— Բարև պապի, — ասացին պիտներները հարգանքով:

— Բարև տղաներս, — պատասխանեց ծերունին նայե-
լով պատանիներին փայլուն աչքերին և նրանց կարմիր
փողկապներին:

— Մենք Հրանտին ենք ուղղում, — ասացին պիտներները:

Այդ ժամանակ վաղեց, ծերունու առաջն ընկավ սև
աչքերով, սև դանդուր մազերով մի փոքրիկ տղա:

— Արամ, Աշոտ, — ճչաց նա:

— Ներս համեցեք, — ասաց ծերունին:

Պիտներները ներս մտան համեստ կահավորված մի
սենյակ. ուր դիմացի պատին փակցված էր առաջնորդի
մեծադիր նկարը:

Երիտասարդ և գեղեցկադեմ մի կին՝ Հրանտի մայրը,
աթոռ առաջարկեց նստելու:

— Գիտե՞ս, հայրիկ, — դիմեց երիտասարդ կինը ծերու-
նուն, — սրանք մեր բակի պիտներներն են, մեր Հրանտի
ամենալավ ընկերները:

Հրանտին երբեք մենակ չեն թողնում, խաղում են
նրա հետ, զբոսանքի են գնում, երեկ էլ մանկական եր-
կաթուղի էին տարել:

— Լավ է, հիանալի է, — շնորհում էր ծերունին:

— Մենք Հրանտի համար նվեր ենք բերել այբբենարան և թվաբանության դասագիրք: Ձե՞ որ մի քանի օրից հետո նա դպրոց է գնալու, — ասացին Արամն ու Աշոտը:

Այս լսելով, Հրանտը թռչկոտեց ուրախ.

— Ես դպրոց եմ գնալու, . . ես դպրոց եմ գնալու:

— Սովետական դպրոց, — ավելացրեց մայրը, տղայի գյուլքը կրծքին սեղմելով:

Պիոներները գրքերը հանձնեցին Հրանտին:

— Շնորհակալություն, — բացադանչեց Հրանտը:

— Շնորհակալություն, — կրկնեցին մայրը և պապը:

— Դուք էլ իմ հարազատ թոռնիկներն եք, — ասաց ծերունին գթոտ ձայնով, — երջանիկ եք, որ դեռ պատանի եք ու ծաղկում եք այս ազատ արևի տակ. իսկ ես իմ պատանեկությունը անց եմ կացրել հայրենիքես դուրս, օտար երկրում. — խոր հառաչեց ծերունին:

— Օտար երկրում ինչպե՞ս էիք ապրում պապի, — հարցրին պիոներները իրենց խելացի աչքերը ծերունու վրա հառելով:

— Էհ զավակներս, մի՛ հարցրեք, — պատասխանեց ծերունին: — Այնտեղ օտար երկնքի տակ, արևն էլ չէր տաքացնում մեզ: Ուսում չառա, աշխատեցի օր ու գիշեր, իմ որդին՝ Հակոբիկիս հայրն էլ ուսում չառավ, աշխատեց օր ու գիշեր: Իրավունք չունեինք, հանգիստ կյանք չունեինք, երազում էինք հայրենիք:

Պիոներները լուռ նայում էին ծերունուն, որի շուրթերը հուզմունքից դողում էին:

Հանկարծ ծերունու դեմքը վալլատակեց, նայեց պատի նկարին ու ավելացրեց.

— Այս մեծ մարդու շնորհիվ մենք նորից մեր հայրենիքը գտանք՝ ազատ Հայաստանը:

Փոքր դադարից հետո ծերունին ճակատը շփելով շա-
րունակեց ոգեվորված ձեռքը դնելով Հրանտի ուսին.

— Ես և որդիս ուսում չառանք, բայց թոռնիկս այստեղ
ուսում կառնի, — նա ձայնն է՛լ ավելի բարձրացրեց.

— Քայլեցեք զավակներս, քայլեցեք լույսի հետ, այս
նոր կյանքի հետ: Ձերն է ապագան...

Հրանտը դրժերը սեղմել էր կրծքին ու շշնջում էր.

— Ես դպրոց եմ գնալու, ես դպրոց եմ գնալու:

Պիոներները ելան, ցտեսություն ասացին ու գնացին:

Մայրը, պապը և Հրանտը ժպտալով նայում էին նը-
րանց ետևից:

Իսկ պիոներները ականջին դեռ երկար ժամանակ
հնչում էին ծերունու հուզիչ խոսքերը.

— Քայլեցեք զավակներս, քայլեցեք լույսի հետ... Այս
նոր կյանքի հետ: Ձերն է ապագան:

ԵՍ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՄ

Առաջնորդ էր:

Արևի առաջին ճառագայթները պատուհանից ներս ընկան ու լուսավորեցին սենյակը: Մի փոքրիկ աղջիկ հանկարծ արթնացավ, նստեց անկողնում, սևուկ աչքերը տրորելով նայեց սեղանի ժամացույցին ու շշնջաց.

— Ժամը 6-ն է, իսկ ես գնալու եմ ութին...

Նորից քնել նա չէր կարող, ինչ աներ հապա,—մտածում էր աղջիկը և զայրանում ժամացույցի վրա, որ այնպես դանդաղ էր շարժվում: Հայրիկը գիշերային հերթին գնացել էր գործարան, իսկ մայրիկն ու իրենից փոքր եղբայրը դեռ քնած էին:

Աղջիկը նայեց առաստաղին, նայեց չորս կողմ և որպեսզի ժամանակը շուտ անցնի մտքում սկսեց մեկ-երկու հաշվել: Բայց ժամացույցի սլաքներն կարծես տեղից չէին շարժվում:

Աղջիկն այլևս չհամբերեց, զգուշութամբ վերմակը վրայից նետեց, ոտները ծայրերի վրա դնաց լվացվեց, հագավ իր ամենագեղեցիկ զգեստը, որ քնելուց առաջ մայրիկը դրել էր նրա կողքին, ապա դնաց հայելու առաջ կանգնեց, սանրվեց կոկիկ ու զարմացավ, կարծես հայելու միջից մի ուրիշ աղջիկ էր նայում և ոչ ինքը, դեմքը լրջացել էր, նույնիսկ «բոյ» էր քաշել:

— Մայրիկ ջան, ինչո՞ւ չես զարթնում, չէ՞ որ ես

դպրոց եմ գնալու,— շշնջում էր նա խնդրող հայացքով
մոր կողմը դարձրած։

Հանկարծ աչքն ընկավ սենյակի անկյունին, որտեղ
խաղալիքներն էին սուսիկ-փուսիկ նրան նայում։

— Ձեզ հետ չեմ խաղալու, դուք փոքրերի համար եք.
ես արդեն մեծ եմ,— շշնջաց աղջիկը և ուզում էր երեսը
շրջել, բայց տեսավ տիկնիկի կապույտ, ժպտուն աչքերը
իրեն վրա հառած, մոտեցավ ու կանչեց նրան խսկական
անունով։

— Հասմիկ ջան, ինձ հետ ուզում ես դպրոց գնալ,
բայց չէ՞ որ դու յոթ տարեկան չկաս, իսկ ես արդեն յոթ
տարեկան եմ...

Աղջիկը հպարտ ձգված՝ մատը թափահարեց բրդոս
արջուկի վրա։

— Դու չաբաճճի ես, երեսդ միշտ կեղտոտված, քեզ
դպրոց չեն ընդունի... մի փոքր մտածելուց հետո ավել
լացրեց։

— Լավ մի տխրեք, տանը ձեզ հետ կալարապեմ, դա
սերը կկրկնենք միասին։

Այդ ժամանակ մայրիկը գլուխը բարձրացրեց ու
տեսնելով աղջկան ոտքի վրա, ասաց ժպտալով։

— Անահիտ, ինչպես երևում է գիշերը քունդ չի տա-
րել, դու արդեն պատրաստվել ես դպրոց գնալու։

— Ե՛ս— ես մայրիկ ջան բա որ ուշանամ... կմկմաց
Անահիտը շփոթված։

— Ձես ուշանա, մինչև ութը ժամանակ շատ կա,— հան-
գրատացրեց մայրը աղջկան, ապա զննելով նրան ոտից
գլուխ, ուրախ ավելացրեց։

— Խսկական դպրոցականի նման ես։

— Դպրոցական... դվարթ բացադանչեց Անահիտը,
աչքը չհեռացնելով ժամացույցի սլաքներից։

Մայրիկը վեր կացավ, հագնվեց, փոքրիկ տղայի շորերն էլ հագցրեց, արագ թեյ պատրաստեց, հետո երեքով նստած թեյում էին, փոքրիկ եղբայրն աղմկում էր անհոգ, իսկ Անահիտն շտապելուց ոչինչ չէր ուզում ուտել, սիրտը անհանգիստ դարկում էր և գլխում մի միտք էր շարունակ պտտվում, թե ինչպես էր լինելու առաջին օրը դպրոցում:

— Անահիտ, — դրսից կանչեց բարակիկ ձայն:

— Ընկերուհիս, ընկերուհիս, — աղաղակեց Անահիտն ու թեյը կիսատ, ոտքի ելավ:

— Դեռ ժամանակ կա, ուր ես շտապում, — ասաց մայրիկը մեղմ հանդիմանելով:

Անահիտը կսպասե՞ր, այբբենարանը թևի տակ դրեց, ուզում էր դուրս վազել, երբ մայրը նրան ասաց.

— Սպասիր, ես էլ եմ գալիս:

Շեմքում Անահիտին հանդիպեց ընկերուհին, իսկ և իսկ նրա հասակին, նրա նման կոկիկ հագնված, սանրված մի փոքրիկ աղջիկ, անունը Շուշիկ:

Երկու ընկերուհիներ իրար նայեցին, ժպտացին, ու ձեռք — ձեռքի տված արագ քալեցին:

Մայրիկը փոքրիկ տղալին գրկած՝ քայլում էր նրանց ետևից երջանիկ ժպիտը դեմքին:

Պարզ ու պայծառ օր էր. սեպտեմբերի 1-ը:

Մեղմիկ հովը շոյում էր ընկերուհիների զվարթ դեմքերը:

Շուտով նրանք հասան դպրոցի փողոցը: Երեխաները գրքերը թևերի տակ սեղմած, ամեն կողմերից թեթև թիթեռների նման վազում էին դեպի դպրոց: Ահա և սպիտակ պատերով, մեծ պատուհաններով դպրոցի շենքը:

Անահիտը և Շուշիկը մայրիկի ուղեկցությամբ մտան բակը:

Այնտեղ գպրոցի բակում, խոնավել էին բարձր և ցածր
դասարանների աշակերտուհիները—նրանք ուրախ կանչե-
րով փաթաթվում էին միմյանց, կարոտով համբուրվում:

Նորեկները այդ ամենին դեռ անսովոր ու անհամար-
ձակ խմբվել էին մի տեղ, անուաններն էին հայտնում, ծա-
նոթանում էին միմյանց հետ:

Հանկարծ հնչեց դպրոցական զանգը:

Ձը՛նգ... զը՛նգ...

Բոլորն զգաստացան և ուրախ աղմուկով դիմեցին
դեպի դասարանները:

Նորեկները դեռ սպասում էին, նրանց մեջ էին Անա-
հիտն ու Շուշիկը իրար ձեռքից ամուր բռնած:

—Ուսուցչուհին... շուտ անցավ նորեկների մեջ:

Այդ ժամանակ նրանց մոտեցավ, բարի դեմքով, մի-
ջահասակ ուսուցչուհին, որը հարգանքով բարևեց Անահի-
տի մայրիկին և մյուս ծնողներին, ապա երեխաներին
դույզ-դույզ կանգնեցրեց ու մայրական քնքշությամբ
սասաց.

—Այժմ երեխաներ հետևեցեք ինձ:

Երեխաները լուռ հետևեցին ուսուցչուհուն:

Մեծ և լուսավոր սենյակ էր առաջին դասարանը.
գեղեցիկ ներկած նստարանները շարված էին իրար
կողքի:

Անահիտը լուռ, զարմացած նայում էր չորս կողմ, նրա
համար ամեն ինչ նոր էր և՛ դասարանը, և՛ ուսուցչուհին,
և՛ ընկերուհիները:

—Հասակի կարգով սլիտի նստեք,—նորից հնչեց ու-
սուցչուհու մեղմ ձայնը, — դուք փոքրիկներ առաջ
եկեք,—դիմեց նա Անահիտին և Շուշիկին:

Նրանք երկուսով հուզմունքից դողալով առաջ՝ դնա-

ցին և նստեցին ուսուցչուհու ցույց տված նստարանին՝
առաջին շարքում:

Երբ բոլոր երեխաները նստեցին համապատասխան
շարքերում զույգ-զույգ, այն ժամանակ ուսուցչուհին
բարձրաձայն, այբբենական կարգով կարդաց անուն—ազ-
գանունները:

Երբեմն տեղերից լսվում էր.

—Ներկա...

Անահիտն անհամբեր սպասում էր, թե երբ պիտի իր
ազգանունը կարդար ուսուցչուհին:

Վերջապես նրա անունը հնչեց ողջ դասարանով մեկ.

—Ծատուրյան Անահիտ...

Աղջիկը ձգված կանգնեց տեղում և բարձր ձայնով
ասաց.

—Ներկա...

Անուն—ազգանունները կարդալուց հետո, ուսուցչու-
հին հանդարտ ձայնով սկսեց բացատրել դպրոցի կարգ
ու կանոնները:

—Սիրելի երեխաներ, այսօր ձեր կյանքի ամենագե-
ղեցիկ, ամենաերջանիկ օրն է, այսօրվանից դուք սովե-
տական դպրոցի աշակերտուհիներ եք.—մի վիճքը լռելուց
հետո շարունակեց խստապահանջ տոնով.

—Պետք է լինեք կարգապահ, օրինակելի, դասերի
մեջ առաջագետ, ընկերասեր...

Անահիտը ոչ մի բառ չէր ուզում բաց թողնել ու-
սուցչուհու ասածներից, մտքում կրկնում էր նրա խոսքերը:

Առաջին օրը երկու դաս առան:

—Ափսոս, շուտ վերջացավ,—շշնջում էր Անահիտը,
չէր ուզում դպրոցից և նոր ընկերուհիներից բաժանվել:

Ահա մի խումբ աղջիկների հետ նա տուն էր վերա-
դառնում աշխույժ թովալով:

Արևն այնպես պայծառ էր շողում, ամեն ինչ այն-
պես գեղեցիկ էր երևում Անահիտի աչքին:

Դեռ երկար ժամանակ նրա աղանջին հնչում էր
դպրոցի զանգի քաղցր ղողանջը:

Անահիտը հպարտ ձգված, կրկնում էր կամացուկ.

— Ես դպրոցական եմ...

ԸՆԿԵՐՈՒՀԻՆԵՐԸ

Ձմռան մի ցուրտ առավոտ էր: Մանուշիկը հիվանդ պառկած էր անկողնում: Մայրիկը տունն էր հավաքում: Տան ամենափոքրիկը՝ հինգ տարեկան Վաչիկը վառարանի կողքին նստած խաղում էր կատվի հետ:

Այդ ժամանակ դուռը ծեծեցին:

Առաջինը Վաչիկը վազեց դեպի դուռը: Նրա ետևից վազեց կատուն:

Հետո մայրիկը մոտեցավ, բացեց դուռը:

Շեմքում կանգնեցին երեք փոքրիկ աղջիկներ: Նրեքն էլ մի հասակի: Ձյունը նստել էր նրանց մազերին, ուսերին: Ցրտից կարմրել էին նրանց այտերը:

Նրանք ձեռքերին բռնել էին մի-մի փաթեթ:

— Կարելի՞ է, — դիմեցին նրանք մեղմաձայն:

— Համեցեք, խնդրեմ... Մայրիկը շատ սիրալիր ներս հրավիրեց նրանց: Նրանք երեքն էլ Մանուշիկի ընկերուհիներն էին: Նրեքն էլ առաջին դասարանի աշակերտուհիներ:

Նրանք ներս մտան և զգույշ քայլերով մոտեցան Մանուշիկի անկողնուն:

— Բարև սիրելի Մանուշիկ, — ասացին միաբերան:

— Ընկերուհիներս, — ուրախ բացառանչեց Մանուշիկը դըլուխը բարձի վրայից բարձրացնելով:

Չարաճճի Վաչիկն ընդհատեց իր խաղն ու պլշած աչքերով նայում էր Մանուշիկի ընկերուհիներին: Տան

մեկ ուրիշ չարաճճին՝ կատուէն նստել էր Վաչիկի ոտներ-
րի մոտ ու նույնպէս պլշած նայում էր ընկերուհիներին:

— Առանց քեզ այնպէս տխուր է, — ասաց Արմիկը, որ
Մանուշիկի կողքին, մի նստարանի վրա էր նստում:

— Ինչո՞ւ ես հիվանդացել, գլուխդ է ցավում, — հարց-
րեց Լուսիկը ձեռքը դնելով Մանուշիկի ճակատին:

— Իսկ Աշխենը ուղղում էր Մանուշիկի վերմակը, որ
նա չմրսի:

Ինչ քնքո՞ւշ, ի՞նչ սիրալիւր էին Մանուշիկի ընկե-
րուհիները: Նրանք գիտեին, որ Մանուշիկի հայրը գնա-
ցել էր ռազմաճակատ, կռվել էր Փաշիստների դեմ ու
այլևս չէր վերադարձել: Այժմ հայրիկի փոխարեն մայ-
րիկն էր աշխատում և Մանուշիկին ու նրա փոքրիկ եղ-
բորը պահում:

Ընկերուհիները ինչպէս էին ափսոսում, որ Մանու-
շիկը հիվանդ էր ու գունատ: Ձէ որ հայրիկն էլ չէր վե-
րադարձել ռազմաճակատից: Եվ որպէսզի Մանուշիկը չը-
տխրի, նրանք սկսեցին աշխույժ գրույց: Պատմում էին
դպրոցից, դասերից:

— Մանուշիկն անհամբեր աղջիկ է, ուզում է վաղը
դպրոց գնալ, — ասաց մայրիկը դժկամությամբ:

— Ոչ, չի կարելի, դու դեռ հիվանդ ես, — մատը թափա-
հարեց Արմիկը:

— Ախր դասերից ետ եմ մնում, — ասաց Մանուշիկը
տխուր:

— Ոչ, դու ետ չես մնա, — միջամտեց Լուսիկը:

— Այն ինչ անցել ենք առանց քեզ, հայոց լեզու և
թվաբանություն, ամեն ինչ քեզ կպատմենք, կօգնենք
որ հասնես, — ավելացրեց Աշխենը:

— Համառում, ոչինչ չի ուտում նորից, — դժգոհեց
մայրիկը:

—Այժմ կխմես դու իմ բերած կաթը,— դիմեց Արմիկը քնքուշ սպառնալիքով։

—Իսկ ես բերել եմ քաղցր կարկանդակ, պիտի ուտես,—ասաց Լուսիկը։

—Նա էլ բերել եմ կարմիր խնձորներ,—ասաց Աշխենը։
Մանուշիկը չմերժեց ընկերուհիներին հյուրասիրությունը։

Նա խմում էր կաթը և ուտում կարկանդակը ախորժակով։ Մայրիկը գաղտագողի նայում էր նրան և ուրախանում։ Ուախ էր նաև Վաչիկը, որ իրեն բաժին էր ընկել մի մեծ ու կարմիր խնձոր։

Ընկերուհիները վեր կացան գնալու։

—Տես, Մանուշիկ, չտխրես, վաղն էլի կգանք,—ասաց Արմիկը։

Նրանք ցտեսություն ասացին ու դուրս եկան։

—Ցտեսություն, շնորհակալություն,—շնջում էր Մանուշիկը ու ժպտում։

Մայրիկն ընկերուհիներին ճանապարհեց մինչև փողոց։

—Մորաքույր, չթողնես Մանուշիկը շուտ վեր կենա։

—Թող լավ առողջանա,—հերթով պատվիրում էին ընկերուհիները։

Մայրիկը նայում էր նրանց ետևից ու մտածում. ինչ լավ, ինչ բարի են Մանուշիկիս ընկերուհիները։

Այդ միջոցին Վաչիկը վառարանի մոտ նստած կծում էր կարմիր խնձորը։

Իսկ Մանուշիկը անհամբեր սպասում էր, որ շուտով առողջանա և նորից, թե-թեի տված իր լավ ընկերուհիներին հետ, դպրոց վազի։

ԸՆԿԵՐՆԵՐԸ ՕԳՆԵՑԻՆ

Վանին երկրորդ դասարանի աշակերտ էր, բայց շատ չարաճճի էր, տարվում էր խաղերով ու դասերից ետ մնում:

Վանուց ամենից շատ դժգոհում էր թվաբանության ուսուցիչը և ամեն անգամ ամբողջ դասարանի առաջ նրան հանդիմանում:

— Թվաբանությունը լուրջ առարկա է, կցանքում քեզ շատ պետք կգա, խելքի արի, պարապի...

Վանին լուռ գլուխը խոնարհում էր կրճքին ու ամութից մինչև ահանջները կարմրում, բայց հենց որ դասը վերջանում էր, նա մոռանում էր ուսուցչի ասածները և միայն խաղն էր հիշում:

Վանու հայրիկը և մայրիկը աշխատում էին գործարանում, տանը միայն պառավ տատն էր մնում: Երբ Վանին դպրոցից տուն էր գալիս տատը շարունակ հիշեցնում էր նրան.

— Վանի տուն արի, դասերդ սերտի...

Իսկ Վանին իր սովորական խաղերն էր շարունակում, վազում, ցատկում, մագլցում ծառերը ու խաղից երբեք չէր կշտանում:

Նրա ընկերները՝ Սերոբիկը և Գարիկը թվաբանությունից ուժեղ էին, որոշեցին դասերից հետո մնալ և Վանու հետ պարապել, բայց չարաճճի Վանին այժյամի պես փախչում էր նրանց կողքից:

Ուսումնական տարին վերջանում էր, Վանին կարող էր դասարանում մնալ:

Ընկերները մտածում էին մեջ ընկան: Այժմ էլ ուրիշ հնար էին փնտրում նրա հետ պարապելու:

Ցերեկվա ժամը մեկն էր: Վանին դպրոցից ատուն եկավ, պայուսակը նետեց, ուղում էր դուրս թռչել, երբ շեմքում դեմը կանգնեցին Սերոբիկն ու Գարիկը մաքուր հագնված, կարմիր փողկապներով:

— Վանի եկել ենք քեզ հետ միասին վաղվա դասերը պատրաստենք, — ասացին նրանք ժպտալով:

Վանին գլուխը քորեց, շփոթված:

«Հապա խաղը» մտածեց նա, բայց ուր ընկերները եկել էին նրանց հո մենակ չէ՞ր թողնի:

Վանին ընկերներին ներս հրավիրեց: Նրանք գլխարկները վերցնելով ներս մտան:

Պառավ տատը շատ սիրով դիմավորեց Վանի ընկերներին: Սերոբիկը և Գարիկը նստեցին սեղանի մոտ, հանեցին թվաբանության դասագիրքը և տետրերը:

— Վանի, թվաբանության տետրդ բեր:

Վանին լուռ կատարեց ընկերների հրամանը:

— Երկու խնդիր է մեզ տրված, երկուսն էլ պետք է վճռենք, — ասաց Սերոբիկը հանդարտ ու լուրջ, թվաբանության գիրքը բացելով:

Վանին այնպես մռայլվեց, ասես գլխին բռունցքով խփեցին, չէ՞ որ այնտեղ դուրսը դարձան արևն էր շողշողում, կանաչ ծառերն էին ուխտում, կանչում:

«Ա՛խ թե մեր տանը չէին լինի», մտածում էր Վանին ու ոտներն անհանդիստ իրար քսում:

Այդ ժամանակ հնչեց Սերոբիկի խիստ ձայնը.

— Կոռպերատիվի 112 հաճախորդից յուրաքանչյուրը գնեց 8 կիլոգրամ կաղամբ և 6 կիլոգրամ շաղգամ: Որքան բանջարեղեն վաճառվեց բոլոր հաճախորդներին:

Սերոբիկը բացատրում էր ամեն մի հարցն առանձին-
առանձին ու հարցնում.

— Վանի, հասկացա՞ր...

Մյուս կողմից օգնության էր հասնում Գարիկը:

— Վանի նորից կրկնիր հարցը:

Մոտ մեկ ժամ նրանք պարապեցին:

— Մենք վերջացրինք, — ասացին Սերոբիկն ու Գա-
րիկը, տետրերը պայուսակների մեջ դրին ու գլխարկնե-
րը ծածկեցին:

— Շատ ապրեք, լավ տղաներ, ի՞նչ կլինի ամեն օր
դուք Վանիի հետ դաս պարապեք, — դիմեց տատը ընկեր-
ներին:

— Լավ, տատի ջան, ամեն օր կգանք, — պատասխանե-
ցին ընկերները և դուրս եկան:

Բակում վանին առաջարկեց նրանց խաղալ, բայց նը-
րանք մերժեցին, ասելով, որ իրենք ժամանակ չունեն,
տանը ծնողներն էին սպասում և ապա մյուս դասերը
պիտի պատրաստեն:

Վանին երկար նախում էր ընկերների ետևից, ասա-
տուն մտավ տետրերը շուռ-մուռ տվեց, դուրս եկավ խա-
ղալու, բայց առաջվա նման անհոգ չէր, հիշում էր ընկեր-
ների պատասխանը, որ նրանք ժամանակ չունեն, հիշում
էր դասերը ու մտածումների մեջ ընկնում:

Երբ գործարանից տուն վերադարձան հալորիկը և
մայրիկը, տատը նրանց պատմեց Վանիի ընկերների այ-
ցելության մասին:

Հայրիկը և մայրիկը ուրախացան և ասացին.

— Էլի ընկերները խելքի կբերեն...

* * *

Թվաբանության դաս էր, ուսուցիչը Վանիին կան-
չեց գրատախտակի մոտ:

Վանին դնաց գրատախտակի մոտ ու կավիճը սեղ-
մեց մատների մեջ:

Ուսուցիչը թելադրեց խնդիրը, աշակերտները գրե-
ցին տետրերի մեջ, իսկ Վանին նույնը գրեց գրատախ-
տակի վրա:

— Դե վճռիր տեսնեմ:

Վանին մի պահ մտածմունքի մեջ ընկավ ու հան-
կարծ միտքը լուսավորվեց, — չէ որ երեկ ճիշտ այդպիսի
մի խնդիր էր վճռել ընկերների հետ:

Իսկ Սերոբիկն ու Գարիկը, երրորդ շարքից վիզները
երկարացրած, սրտատրուի հետևում էին Վանու ամեն մի
շարժումին:

Սկզբում դանդաղ, հետո արագ Վանին խզզացնում
էր կավիճը գրատախտակի վրա:

Վճռեց առաջին, երկրորդ, երրորդ հարցերը ու ետ
քաշվեց:

Այնպես արագ էր զարկում Վանիի սիրտը...

— Ճիշտ է, ճիշտ է... շնջացին ընկերները:

Ուսուցիչը մոտեցավ գրատախտակին ու զարմանքից
հտ-հտ քաշվեց, չէր հավատում աչքերին:

— Ճիշտ է, վերջապես... ո՞վ է օգնել քեզ...

Վանին երախտապաքտ աչքերով նայում էր ընկեր-
ների կողմը, նա դողացող ձայնով շնջաց.

— Իմ ընկերներ՝ Սերոբիկն ու Գարիկն օգնեցին:

— Հիանալի է, — բացազանչեց ուսուցիչը ուրախ, — օգ-
նելով ձեր ընկերոջը, ոչ միայն ձեր պատիվը, այլ ողջ
դասարանի պատիվը բարձրացրիք:

Դիչ հետո նա կրկնեց.

— Թվաբանությունը լուրջ առարկա է, Թվաբանու-
թյունը կյանքում ձեզ շատ պետք կգա, լավ սովորեք...

Այդ օրն ուրախ էր ամբողջ դասարանը, որ Վանին
խնդիրը ճիշտ էր վճռել. ամենից շատ ուրախ էին Սերո-
բիկն ու Գարիկը, որ իրենց աշխատանքը իզուր չէր ան-
ցել: Իսկ Վանին գլուխը կախած կրծքին մտածում էր
ամեն օր տանը դասերը պատրաստել և բոլոր առարկա-
ների մեջ առաջադեմ լինել:

ՀԵՐԹԱՊԱՀԸ

Այն առավոտ նա սովորականից ավելի վաղ արթնացավ ու պատրաստվեց դպրոց գնալու: Մայրիկի այն հարցին թե ինչու է շտապում, նա պատասխանեց ուրախ և հպարտ.

— Սիրելի մայրիկ, այսօր ես հերթապահ եմ:

Դա նո. 6 դպրոցի 3-րդ դասարանի աշակերտուհի՝ Արփիկ Նազարյանն էր, որը պայուսակը թևի տակ սեղմած, շտապ քայլերով դուրս եկավ փողոց:

Գարնան պայծառ առավոտ էր. պաղ օդից վարդի նման շիկնեցին աղջկա մաքուր լվացված այտերը: Արփիկը հագնված էր խնամքով, շաղանակագույն զգեստի ուղիղ արդուկած ծալերը ծփում էին ծնկներին. սև մագերը կոկիկ հյուսած էին ու ծայրերը ժապավենով կապած, կոշիկները փայլում էին հայելու նման և այդ բոլորի հետ առանձին շուք ու գեղեցկութուն էր տալիս նրան բլի տակ խնամքով հանգուցած կարմիր փողկապը:

Նա քայլում էր ձգված ու գլուխը բարձր պահած, նա զվարթ էր ու երջանիկ այն մտքից, որ գնում էր դեպի իր սիրելի դպրոցը, ուր հանդիպելու էր կրկին ու կրկին իր սիրելի ընկերուհիներին և ուսուցիչներին: Արևն էր նրան ուղեկցում սիրով ու փայփայում նրա մաքուր լվացված մագերը: Նա զգուշ ու թեթև անցնում էր մեկ մայթից մյուսը, ասես ամենքը ճանապարհ էին տալիս նրան ու շնչում:

— Սա դպրոցական Արփիկ Նազարյանն է. ի՞նչ մաքուր, ի՞նչ գեղեցիկ է հագնված...

Ահա և դպրոցը. առաջինը նա ոտք դրեց դպրոցի շենքը, ծեր պահակի դարմանքը շարժելով.

— Ինչու այսպես շուտ, ի՞նչ է, եկել ես դպրոցը մաքրելու.

— Շուտ եմ եկել, որովհետև հերթապահ եմ, — պատասխանեց Արփիկը շատ լուրջ:

— Հերթապահ... կրկնեց պահակը ուշադիր նայելով մաքուր և կոկիկ հագնված աղջկա ետևից:

Հավաքարարուհին քիչ առաջ էր մաքրել առաջին հարկում գտնվող 3-րդ «բ» դասարանը, բայց մոռացել էր պատուհանները բացել: Արփիկը ոտքերը մաքրեց, ներս մտավ թափով, պայուսակը դրեց իր նստարանի դարակի մեջ և նրա առաջին գործը եղավ պատուհանները բացել:

Բաց պատուհաններից դարձան մաքուր օդը լցվում էր ներս: Աղջիկը ծծում էր մաքուր օդը և կարոտով նայում բնդարձակ, լուսավոր դասարանում շարվե-շար նստարաններին: Հանկարծ նա մատը քսեց իր նստարանին, տեսավ փոշոտ էր, հարկավոր էր մաքրել: Նա, անմիջապես, պայուսակից շորի կտոր հանեց ու սկսեց մեկ-մեկ մաքրել նստարանների երեսը: Ապա թաց ջնջոցով մաքրեց գրատախտակը, վազեց ուսուցչանոց կավիճի մի մեծ կտոր բերեց, դրեց գրատախտակի մոտ, թանաքամանները լցրեց թանաքով, շատ էլ զգույշ էր շարժվում, որպեսզի ոչ մի կաթիլ հանկարծ չկաթեր մաքուր զգեստի վրա: Գնաց պաղ ջրով ձեռքերը լվաց, եկավ կանգնեց բաց պատուհանի առաջ ու նայում էր դպրոցի կանաչ պարտեզին, ուր նոր բողբոջած ծառերի ճյուղերին ծաերն էին ծլվում:

Արփիկը սթափվեց մտքերից, երբ դասարանի դուռը բացվեց.

— Բարև սիրելի Արփիկ, — ներս մտնելով բացազան-
չեց Յողիկը, կլորիկ երեսով, առողջ մի աղջիկ, — ինչու ես
կանգնել, դասին շատ ժամանակ կա, գնանք բակում
խաղանք:

— Այսօր ես հերթապահ եմ, չեմ կարող...

Յողիկը զննելով Արփիկին ոտից գլուխ, մտքում որո-
շեց, որ նա շատ մաքուր և գեղեցիկ էր հագնված. ապա
նայեց իրեն ու դարձավ Արփիկին.

— Տես, ես էլ եմ մաքուր, — նա ցույց տվեց կտրած
եղունգները, բացեց սպիտակ թաշկինակի ծալը և ծածա-
նեց օդում, ծիծաղեց, ցույց տալով իր սպիտակ ատամները,
երբ ուզում էր դուրս վազել, Արփիկը նրա ետևից կանչեց.

— Սպասիր, — ու մոտենալով քանդեց նրա փողկապն
ու նորից խնամքով կապեց, — ալժամ ամեն ինչ լավ է, գնա, —
ասաց Արփիկը ընկերուհու թիկունքին խփելով:

Հետո եկավ Արփիկի գույգը՝ սևաչվի Նուշիկը, որը
Արփիկին բարևելուց հետո գնաց դեպի նստարանը: Ար-
փիկի զննող հայացքը հետևում էր ամեն մի ներս մտնո-
ղի, որ տեսնի նրանք մաքուր և կոկիկ էին ներկայա-
նում դասին թե՛ թափթփված. Արփիկը գնաց Նուշիկի
ականջին շշնջաց.

— Նուշիկ ջան, թող մազերդ հյուսեմ, քանդված են:

— Մայրիկս հիվանդ է, դբաղվեցի ուրիշ գործերով
ու մազերս... կմկմաց Նուշիկը:

— Ոչինչ ես նորից կհյուսեմ, — պատասխանեց Արփի-
կը քրոջ հոգատարությամբ:

— Այսօր առաջին ժամը ի՞նչ դաս է, — հարցրեց Նուշիկը.

— Միթե չես իմանում, ամեն հինգշաբթի, առաջին
ժամը թվաբանություն է, — պատասխանեց Արփիկը հոնքե-
րը խոժոռած:

— Վայ, — ճշաց Նուշիկը, — տնային աշխատանքը չեմ կատարել:

Երկու ընկերուհիներ նայեցին միմյանց, մեկը մեղավոր, մյուսը հանդիմանող հայացքով:

Արփիկը պոկվեց տեղից, գնաց ժամացույցին նայեց, եկավ հայտնեց.

— Մինչև դանդը 20 րոպե կա, շուտ տետրդ հանիր, ես քեզ կօգնեմ, երկու խնդիրն էլ վճարիր:

Նուշիկը ընկերուհու բարի խորհուրդը կատարեց, թղթավառանության տետրը բացեց և սկսեց խնդիրները վճարել: Դասարանի դուռը ավելի հաճախ էր բացվում, աշակերտուհիները գալիս էին իրենց պայուսակները դնում նստարանների դարակներում:

Ապա նայում էին հերթապահին, ասես հարցնելիս լինեին՝ ասա մաքուր ենք ու կարգին...

Արփիկը երբեմն նկատողություն էր անում մեկին, որ եղունգները մաքուր չէին, մյուսի թաշկինակը, կամ թե երրորդի կոշիկներն էին փոշոտ: Ընկերուհիները չէին վիրավորվում Արփիկից, որովհետև նա մեղմ էր ու քաղաքավարի, ասլա նրա մաքուր և կոկիկ արտաքինը ավելի մեծ սեր և հարգանք էր ներշնչում:

Արփիկը մտահոգ էր, անհանգիստ գնում էր, գալիս. չէ որ նա որոշել էր իր հերթապահության ժամանակ ամեն ինչ կարգին լինի: Մինչդեռ Նուշիկը թվաբանությունը չէր վճարել, զանգի ժամանակը մոտ էր, Աշխենն ու Ջաքելը չէին եկել, իսկ որ հանկարծ ուշանային, դասը ինչպես կխանգարվեր:

Ջր՛նգ, զո՛նգ, հնչեց դասի զանգը.

— Նուշիկ վե՛ջացրի՛ր, — բացադանչեց Արփիկը հուզված ձայնով:

Նուշիկը վերջին թվերն էր գրում, շտապելուց թանաքի կաթիլները կաթեցնելով տետրակի վրա:

Արփիկը դռան մոտ կանգնած, ներս եկող ընկերուհիներին զգուշացնում էր.

— Կամաց, փոշի չբարձրանա. . .

— Ինչ խիստ, ինչ կարգապահ է մեր հերթապահը, — շնջում էին ընկերուհիները իրար ականջի:

Աշխենը վազեվազ եկավ, խառնվեց ընկերուհիներին.

— Ինչո՞ւ այդքան շատ ես քնում, բա որ դասից ուշանայիր. . . հանդիմանեց Արփիկը:

— Մեր ժամացույցը սխալ ցույց տվեց, սկսեց արդարանալ Աշխենը:

— Միշտ ժամացույցին ես մեղավոր բռնում, — վրա տվին ընկերուհիները:

Երբ ամենքը բռնեցին իրենց տեղերը և սպասում էին ուսուցչուհու մուտքին, մեկ էլ դուռը բացվեց, ներս ընկավ շիկահեր Զաքելը. նա քրտնած էր, հևում էր, ուրախացավ, որ ուսուցչուհին դեռ չէր եկել, հայացքը հանդիպեց հերթապահի նախատող հայացքին:

Այդ միջոցին ներս մտավ թվաբանության ուսուցչուհին՝ նիհար, բարձրահասակ, ականոցներն աչքերին:

Աշակերտուհիները ոտքի կանգնեցին, բարևեցին ուսուցչուհուն և կրկին նստեցին իրենց տեղերում:

Դասն ընթանում էր աշխույժ, ուսուցչուհին ոմանց դրատախտակի մոտ էր կանչում, խնդիրներ թելադրում. նրանք գրում էին դրատախտակի վրա, իսկ մյուսները իրենց տետրերի մեջ: Ամբողջ դասարանը մասնակցում էր խնդիրների լուծմանը:

Արփիկը լարված հետևում էր դասի ընթացքին:

Դասը վերջանալու վրա էր, ուսուցչուհին հերթով մոտենում էր նստարաններին և ստուգում տնային տետրերը:

Դասարանը լուռ էր, ամեն մեկը սրտատրոփ սպասում էր, թե իր տնային աշխատանքին ինչպիսի դնահատական կտա ուսուցչուհին:

Հանկարծ ողջ դասարանը ցնցվեց սևուցչուհու խիստ
զալընացած տոնից։

— Սա ինչ շնորհք է, նայեցեք հապա։

Նա ցույց էր տալիս թանաքի բծերով պատած մի
տետրակ։

Նուշիկը գլուխը դրել էր սեղանին և ամաչում էր
նայել ուսուցչուհուն։

Բոլորը հասկացան, որ դա Նուշիկի տետրակն է։

— Ես պահանջում եմ ոչ միայն ճիշտ լուծել խնդիր-
ները, այլև մաքուր, գեղեցիկ գրել, — շարունակեց ուսուց-
չուհին ականոցներն ուղղելով քթին։

Այդ խոսքերը հարվածում էին Արփիկին, նա գլուխը
խոնարհել էր կրծքին, չէ որ նա որոշել էր, որ իր հեր-
թապահույթյան ժամանակ ամեն ինչ կարգին լինի և
հանկարծ...

— Հապա նայեցեք այս տետրակին, — այժմ էլ ուսուց-
չուհին գոհունակության ժպիտը դեմքին պարզել էր ողջ
դասարանի աչքի դեմ մի ուրիշ գեղեցիկ գրված տետրակ։

— Բոլորդ այսպես սլիտի պահեք ձեր տետրերը, ինչ-
պես Արփիկ Նաղարյանը, — շարունակեց ուսուցչուհին,
ձայնը մեղմացրած։

Հակառակ բոլորի սպասածի Արփիկը ոչ թե ուրախա-
ցավ ուսուցչուհու գովասանքից, այլ կանգնեց մռայլ և
դարձավ ուսուցչուհուն.

— Ընկեր Դավթյան...

Դասարանը սպասում էր թե ինչ պիտի ասեր նա։

Արփիկը նայեց Նուշիկին և շարունակեց.

— Նուշիկի տետրակն էլ սրանից հետո միշտ մաքուր,
գեղեցիկ կլինի...

Բոլորի հայացքները ուղղված էին Արփիկի վրա։

Արևի շողն ընկել էր նրա դեմքին, մազերին. նա
այնպես պայծառ էր, այնքան դուրախ:

Փոքր լուսթյունից հետո ուսուցչուհին դարձավ Նու-
շիկին հուզված ձայնով.

— Բարձրացրու գլուխդ Նուշիկ, էլ մի տխրի, քո ըն-
կերուհին իր ընկերասիրությամբ քո տետրակի բծերը
մաքրեց...

Ձանգը հնչեց, ուսուցչուհին սիրով հրաժեշտ տվեց
3-րդ «բ» դասարանին, Արփիկին ասելով.

— Դու իսկական պիոներ ես, որ հետևում ես ոչ մի-
այն քո մաքրությանը, այլև ընկերներիդ մաքրությանն
ու կարգապահությանը:

Դասամիջոցին ընկերուհիները ուղում էին փարվել,
զգվել Արփիկին-կարծես նոր էին հանդիպում նրան:

ԶԱՐ ԿԱՏԱԿ

Զորիկը շատ փոքրիկ տղա էր, դեռ նոր էր սկսել քայլել, թոթովել, մայրիկը նրան սովորեցնում էր. «Զորիկ ջան տես խաղալիքներդ շաղ ընկած մի թողնի—խաղալուց հետո նորից իրենց տեղը դիր, այ այստեղ», ցույց էր տալիս մայրիկը:

Զորիկն իր խելացի սև աչքերը մայրիկի վրա հառած հետևում էր նրա ամեն մի շարժումին. լսում էր նրա ամեն մի ասածը ու խաղալուց հետո, խաղալիքները մեկիկ-մեկիկ դարսում էր իրենց տեղերը: Զորիկը մեծացավ, դարձավ դպրոցական աշակերտ, դարձավ պիոներ, բայց մայրիկը դարձյալ նրան հիշեցնում էր. «սիրելի Զորիկ, տես դպրոցում նույնպես կարգապահ եղիր. տանը մի մոռանա ոչ մի դասագիրք, տետրակ, կամ գրենական պիտույք»:

Զորիկը լսում էր մայրիկին, ու քնելուց առաջ իր պալուսակի մեջ դասավորում էր օրվա բոլոր անհրաժեշտ գրքերը, տետրերը, գրենական պիտույքները, ապա մտքի մեջ վաղվա դասերն էր կրկնում մինչև որ աչքերը փակվում էին:

Տարիներն անցնում էին արագ, այժմ արդեն Զորիկը չորրորդ դասարանի աշակերտ էր. դպրոցում ամենքը ճանաչում էին նրան որպես օրինակելի պիոներին, որ հետևում էր դպրոցական բոլոր կանոններին:

Զորիկը համոզվել էր թե ինչպիսի վատ հետևանքներ էին ունենում աշակերտի մոռացկոտությունն ու անփութությունը:

Ահա մի անգամ մի այդպիսի դեպք պատահեց, որ
Զորիկը չի մոռանում:

Հայոց լեզվի դաս էր. ուսուցչի կարգադրութեամբ
բոլորը տետրերը բացեցին և սլափափափեցին շարադրու-
թյուն գրելու. Սուրիկը, որ հայտնի էր որպէս մոռացկոտ,
այս անգամ ամեն կողմ էր դառնում և ընկերներին ավե-
րորդ գրիչ էր խնդրում:

Ուսուցիչը սկսեց թելադրել, Սուրիկը երկրորդ շար-
քից շրջվեց ձեռքը սլափեց, որ չորրորդ շարքից ավե-
րորդ գրիչ վերցնի, կապով թանաքին ու թանաքը թափվեց
ընկերոջ տետրակի և շորերի վրա:

— Այս ինչ արեցիր, բացադանչեց ընկերը հուզված.

Դասարանը աղմկեց, ուսուցիչը ընդհատեց թելա-
դրութեանը և նախատեց Սուրիկին ծանր խոսքերով.

— Ամեն մի մոռացկոտ, անփութ շակերտ ոչ միայն
իրեն է խանդարում, այլ ողջ դասարանին:

Զորիկը այդպիսի դեպքերից ավելի էր զգաստանում
և որոշում էլ ավելի ուշադիր լինել, անփութ ու մոռաց-
կոտ չլինել:

Այն օրը նա դպրոց էր եկել բարձր տրամադրութեամբ.
Ինչպէս միշտ այս անգամ էլ պայուսակում, հերթակա-
նութեամբ դասավորել էր դասադրքերը, տետրերը և մնա-
ցած պիտույքները, չէր մոռացել վերցնել նաև դունավոր
մատիտների տուփը, որոհեաւ այդ օրը վերջին ժամը նկար-
չութեան դաս էր:

Դասերն անցնում էին աշխուժ, իսկ դասամիջոցներին
ուրախ խաղում, վազվզում էին դպրոցի բակում:

Հինգերորդ դասի զանգը. հնչեց, չորրորդ դասարանի
աշակերտները մտան դասարան և գրավելով իրենց տե-
ղերը մինչև ուսուցչի գալը, հանեցին նկարչութեան տետ-
րերը և մատիտները:

Զորիկը ամենից շուտ հանեց պայուսակից և առջևը փռեց նկարչության տետրը, այնպես ուրախ էր նա, այնքան էր սիրում նկարել ծիածանի բոլոր գույներն ունեցող մատիտներով։

Նա ձեռքը տարավ պայուսակի մեջ, որ դուրս բերի իր գունավոր մատիտների տուփը. այդ միջոցին, դուռը բացվեց, ներս մտավ բարի ժպիտը դեմքին, սպիտակ գլուխով, նկարչության ուսուցիչը, որը գրկել էր մեծ և գեղեցիկ մի կապտագույն ծաղկաման։

— Նկարելո՞ւ ենք...

Նկարչության ուսուցիչը հեալով ծաղկամանը դրեց սեղանին ու դարձավ դասարանին։

— Սյուր դուք պետք է նկարեք ահա այս գեղեցիկ ծաղկամանը. նա հերթապահ Գուրգենի օգնությամբ սեղանը քաշեց դասարանի կենտրոնը, որպեսզի ծաղկամանը լավ տեսանելի լինի բոլորին։

Զորիկը մռայլվել էր. նա փնտրեց և պայուսակի մեջ, և նստարանի դարակուռ, բայց չգտավ գունավոր մատիտների տուփը. միթե տանն էր մոռացել, մոտատանջվում էր նա, բայց չէ որ քնելուց առաջ մյուս պիտույքների հետ գրել էր պայուսակի մեջ, գուցե փոքր քույրն էր հանել, բայց չէ որ նա իրենից շուտ էր պառկել քնելու։ Զորիկը երբեք իրեն այդչափ վատ չէր զգացել, ինչպես այժմ. հուզվելուց քրտնել էր. եթե հայտներ պիտի արժանանար ուսուցչի նախատինքին. հակառակի նման այդ օրը չէր եկել կողքին նստող ընկերը, որ նրա մատիտներից օգտորվեր։ Հանկարծ նրա դեմքի մռայլն անցավ, միտքը լուսավորվեց, հիշեց, որ պայուսակի մի ձեղքում պահել էր ավելորդ գրիչ-ծայրեր և մատիտ։

Ընկերներն արդեն սկսել էին նկարել. Զորիկը շշնջաց.

— Ես ետ չեմ մնա, կնկարեմ, ու սե մատիտի փոք-
րիկ կտորը սեղմած աջ ձեռքում՝ սկսեց նկարել:

Բոլորի աչքերը հառած էին ծաղկամանին, որը վառ
գույներով շողշողում էր պատուհանից ներս ընչած արևի
ճառագայթների տակ: Ինչ գեղեցիկ էր ծաղկամանը և
ինչ հաճելի էր նկարելը: Ձորիկը մերթ ծաղկամանին էր
նայում, մերթ տետրակին, ուր փութաջանորեն գծում էր
ծաղկամանի տակի մասը, ապա ձեռքի վարժ շարժումով
երկու կողմերից կորագծեր քաշեց, միացրեց ներքևի
մասին. ապա համեմատեց իսկական ծաղկամանի հետ՝
նման էր:

Ապա նա պարանոցն էր գծում, և կորավուն ունկերը:
Հանկարծ նա ետ քաշվեց ժպիտը դեմքին. սեղանին դրված
ծաղկամանը տպվել էր նրա տետրի մեջ, միայն գույներն
էին պակասում: Տղան շշնջաց.

— Ախ ռւր եք կորել իմ մատիտներ...

Բայց նա կանգ չառավ, սե մատիտով նոսր և թանձր
ստվեր էր գծում, որ ծաղկամանը ձև ստանար և նմանվեր
իսկականին:

Ողջ դասարանը կլանված նկարում էր: Ուսուցիչը պա-
տուհանի մոտ կանգնած նայում էր դեպի դպրոցի կանաչ
պարտեզը. հանկարծ նա շրջվեց դեպի դասարանն ու ասաց.

— Ով ցանկանում է թող իր սիրած ծաղիկների փուն-
ջը նկարի ծաղկամանի մեջ. այդպես ավելի գեղեցիկ
կլինի:

Դասարանը լուռ հավանություն տվեց ուսուցչի
առաջարկին և ամեն մեկն իր սիրած ծաղիկներն էր կըր-
կին վերհիշում, ծաղկամանի մեջ նկարելու համար:

Ձորիկն անհանգիստ շարժվեց, հիշեց իրենց պարտե-
զում մայիսին բացվող ալ կարմիր վարդերը, որ այնպես
անուշ բուրմունք էին արձակում, Ձորիկը սիրում էր մա-
լիսյան վարդերը:

Այժմ էլ փութաջանորեն վարդերի փուռնջ էր նկարում ծաղկամանի մեջ հետն էլ ամսոսանքով շշնջում.
— Ա՛խ ուր եք, իմ գունավոր մատիտներ...

Ուսուցիչը հերթով մոտենում էր նստարաններին և գիտողություններ էր անում այս, կամ այն աշակերտին.

— Ծաղկամանի պարանոցը երկար է:

— Ունկերը ծուռ են...

— Կարմիր գույնը թույլ է, ուժեղացրու...

Զորիկը վերջին կոկոնն էր նկարում ծաղկամանի լուսկի վրա կախված ու չէր նկատել, որ ուսուցիչը այժմ էլ իր կողքին կանգնել ու լուռ գիտում էր Զորիկի աշխատանքը:

— Ճիշտ և համաչափ է գծված, լավ է, — հնչեց ուսուցչի գոհ ձայնը:

Զորիկը սթափվեց, ուզում էր ինչ սր բան ասել, երբ ուսուցիչը շարունակեց.

— Բայց ինչո՞ւ գույն չես տալիս...

— Ախր մատիտներս, — կմկմաց տղան:

Ուսուցիչը դուրսը պոտեց և հանդիմանող տոնով ասաց.

— Քեզանից չէի սպասում, որ դու էլ մոռանաս:

— Ոչ, նա չի մոռացել, — հանկարծ առաջին շարքից դուռնից Մանվելիկը, որը հայտնի էր իր չարություններով, երբեմն այս կամ այն ընկերների գլխարկը, թաշկինակը կամ մեկ ուրիշ իր էր վեցնում պահում, որ փնտրեն, փնտրեն, չգտնեն: Այս անգամ նա Զորիկի գունավոր մատիտների տուփն էր վերցրել ու իր դարակում պահել:

Բոլորը դարմացած նայում էին Մանվելիկին, որ ձեռքին բռնել էր գունավոր մատիտների տուփը և հուզմունքից դողում էր:

— Ես վերցրի կատակով, որպեսզի դասի սկզբին վերադարձնեմ, բայց մոռացա... կամաց խոստովանվեց Մանվելիկը.

— Դա չար կատակ է, — ընդհատեց ուսուցիչը խիստ բարկացած:

— Նայիր հապա ընկերոջդ տեսրակին, — շարունակեց ուսուցիչը ավելի հանդարտ. քո պատճառով նա չի կարողացել իր աշխատանքն ավարտել, եթե նրա գունավոր մատիտները լինեին, այն ժամանակ և այս ծաղկամանը, և այս վարդերի փունջը ավելի կենդանի ու գեղեցիկ կստացվեին: Մանվելիկը հիշում էր իր բազմաթիվ այդպիսի շարությունները և ամոթից կարմրում. նա հուզված ձայնով ասաց.

— Ե՛ս, ես ներողութուն եմ խնդրում:

Դասը վերջացավ. ուսուցիչը գնալու ժամանակ ասաց.

— Կարգապահ եղեք. մոռացկոտ ու անփութ մի լինեք. դասը մի խանդարեք...

Մանվելիկը գլուխը կրծքին կախած այնպես, այնպես էր նախատում իրեն, որ իր չար կատակի հետևանքով Ձորիկի վարդերը անգույն էին ու անկենդան:

— Էլ չար կատակներ չեմ անի, էլ չեմ խանդարի, — շնչում էր նա:

Իսկ Ձորիկը նայում էր ընկերոջ վրա բարի ներող հայացքով:

ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇ



ՀԱՅՐԻԿԻ ՓՈԽԱՐԵՆ

Տաճատիկի հայրիկը Կարմիր Բանակում հրամա նաւար էր և ժամանակացում էր ֆաշիստների դէմ մղվող կռիվներին: Հայրիկը միշտ նամակ էր գրում ճակատից. «Թեև ձյուն է այստեղ ու սառնամանիք, բայց մենք՝ սովետական մարտիկներս առաջ ենք շարժվում քաջաբար և զրավում ենք թշնամու շատ ամբողջյուններ, գյուղեր, քաղաքներ...»:

ապա նամակի վերջում ավելացնում էր՝ «Շատ կարոտով համբուրում եմ իմ Տաճատիկին, ապագա քաջ մարտիկին...»:

Տաճատիկն էլ անչափ շատ էր սիրում իր հայրիկին, երազում միշտ նրան էր տեսնում, նրա հետ էր զրուցում:

Ամեն անգամ հայրիկից նամակ ստանալիս, ականջները սրած կանգնում էր մայրիկի, տատիկի կողքին ու լսում նամակի ընթերցանությունը, ապա վերջում ուրախ թռչկոտելով կրկնում հայրիկի խոսքերը.

«Մենք սովետական մարտիկներս առաջ ենք շարժվում քաջաբար»:

Տաճատիկն իրեն էլ հայրիկի նման քաջ հրամանատար էր պատկերացնում՝ ամեն անգամ, երբ բակ էր վազում, ընկերներին հավաքում էր շուրջը և արշավանքի պատրաստում, և դա ոչ թե խաղի էր նմանվում, այլ իսկական զորահավաքի՝ գալիս էին ժիր, անհանգիստ տղաներ խմբերով կամ առանձին-առանձին ու ներկայանում Տաճատիկին:

Այդ պահերին Տաճատիկը բոլորովին չէր նմանվում յոթ տարեկանի. լուրջ տեսք ընդունած, խրոխտ ձայնով հրամայում էր տղաներին շարք կանգնել, իրենց ձգված պահել և առաջուց իմանալով ամեն մեկի ձեռքի, կամ ոտքի ուժը, նրանց բաժանում էր համապատասխան վաշտերի, որը հեծյալ, որը հետևակ. վերջն էլ բաժանվում էին երկու կողմերի՝ սովետականի և նրանց հակառակորդների:

Սովետական կողմի հրամանատար էր դառնում ինքը՝ Տաճատիկը և փայտե ձին հեծած, խիստ, համարձակ հրամաններ էր արձակում...

Քաջ հետախույզներ էր ուղարկում ամեն կողմ, որ գնան «թշնամու» բները գտնեն ու տեղեկություններ բերեն: Մեկ էլ տեսար հրամայում էր.

— Կրակ...

Սկսվում էր — տրա-տա-տա...

Երբ խաղը վերջանում էր. բոլոր տղաները միաբերան խոստովանում էին, որ դժվար է Տաճատիկին կռվում հաղթել, ու նրանց աչքում ամեն անգամ Տաճատիկը հզորանում, հերոսանում էր:

* * *

Մի քանի օր անընդհատ անձրև էր թափվում. տանից դուրս գալ, խաղեր կազմակերպել չէր լինում: Բայց Տաճատիկը գտել էր մի ուրիշ զբաղմունք, պատշգամբի մի անկյունում փայտ էր տաշտշում, փոքրիկ մուրճը զարկում, զրնգացնում: Մալրիկի ու տատիկի այն հարցին, թե ի՞նչ ես պատրաստում, նա հոնքերը խոժոռած պատասխանում էր.

— Հրացան, գնդացիր...

— Իսկական զինվորացու է, — շշնջում էին մայրիկն ու տատիկը և ժպտալով հեռանում:

Տաճատիկը թիթեղի կտորից հրացանի փող էր սարքել, այժմ էլ գնդացիը էր պատրաստում ու նրան մի պահ թվաց, որ ինքն ահա պատերազմի դաշտում է իսկական զինվորի նման շինել հազած, հրացանն ուսին, շեկ ձին տակին թռչում է... Ձին հասարակ չէ այլ հրեղեն, իսկ Տաճատիկը ձիու թամբին ամուր կպած, սանձը ձեռքին քշում — անցնում է խիտ անտառների միջով, ձիու սմբակներից կայծեր են թռչում. նա ցատկում է վարար գետերի վրայից, խոր ձորերից. ձայն է տալիս ու ձայն առնում, հասնում սովետական զորքերին:

Ձինվորները կտրում են նրա ճամփան, իջեցնում ձիուց, տանում ուղիղ հրամանատարի մոտ:

Հրամանատարը տնտղում է նրան ոտից զլուխ ու հարցնում.

— Ո՞վ ես դու...

Տաճատիկը հրամանատարի աչքերից, ձայնից ճանաչում է ու գոչում.

— Հայրիկ...

Ինչպիսի կարոտով են հայր ու որդի գրկվում, համբուրվում: Այնուհետև սկսվում է ուժեղ կռիվ, թնդանոթները որոտում են բռն, բռն. սովետական մարտիկները առաջ են գնում գետինը թնդացնելով...

Տաճատիկն իր հոր հետ է միշտ, նրա ձիու կողքին քշում է իր ձին և գնում... Հանկարծ Տաճատիկի ձին խփվում է, Տաճատիկը հետ է ընկնում: Մութը վրա է հասնում... Տաճատիկը քիչ է մնում լաց լինի... բայց որ հիշում է հայրիկին ու նրա քաջ զինվորներին, սիրտ է առնում, սկսում է վազել... մինչև նորից գտնում է հորը և նրա զինվորներին:

Տաճատիկը սթափվեց, այժմ հարկավոր էր գնդացի

փողն ամբացնել. նորից սարքում էր, մուրճը զրնգացնում,
մինչև որ պատրաստեց թնդանոթ և գնդացիր:

Այնուհետև խաղի ժամանակ Տաճատիկը իր սարքած
գնդացիրն ու թնդանոթն էր դուրս բերում բազ: Անցան
օրեր, հայրիկից նամակ չէր ստացվում: Մայրիկը, տատի-
կը սկսել էին անհանգստանալ, առաջվա նման Տաճատի-
կի հետ չէին կատակում, նույնիսկ չնչին բաների համար
բարկանում էին նշա վրա: Մայրիկն ամեն օր թերթ էր
կարդում ու տատիկի հետ կամաց, խորհրդավոր դրուցում,
իսկ Տաճատիկն ուրախ նամակի էր սպասում հայրիկից:

Արև օր էր, բակում հնչում էր Տաճատիկի ձայնը:
Նա առաջուց նախազգուշացրել էր ընկերներին, որ կռի-
վը շատ խիստ է լինելու:

— Դուք անցեք ցանկապատի ետևը, — խոսքը հակառա-
կորդին էր վերաբերվում, — իսկ մենք պարտեզում կմնանք...

Քիչ հետո երկու կողմերն էլ պատրաստ էին, փայտե
սրերը պատյաններից հանած: Սվինամարտ էր լինելու:

Տաճատիկը հրամայեց առաջ շարժվել իր վաշտին, որ
թվով ավելի փոքր էր:

Այս անգամ հակառակ կողմի տղաները շատ խորա-
մանկ գտնվեցին, կատվի նման գողե-գող եկան Սովետա-
կան կողմի տղաներին շրջապատեցին:

Տաճատիկն ետ դարձավ. ինչ տեսնի, քիչ է մնում հա-
կառակորդը սահմանագիծ առուն անցնի...

Տաճատիկն առյուծի նման ափսոսա մռնչաց, որ հա-
կառակորդ տղաների լեզվին ջուր կտրեց... Նա սկսեց ձեռ-
քի սուրը աջ ու ձախ ճոճել...

— Մոտ եկեք, թե տղամարդ եք, — գոչում էր նա:

Ո՞վ էր խենթացել, ո՞վ կկանգներ Տաճատիկի սրի
դիմաց: Տաճատիկի ընկերները ոգեվորված հակառակորդ

տղաներին մեկ-մեկ տարան դեմ անկիւն աշտին: Տաճա-
տիկը նեղն էր գցել նրանց հրամանատարին, զենքերը
խլել էր, այժմ էլ ձեռքերն էր կասկածում, — որ նա չփախչի:
Այդ միջոցին բակում հայտնվեց նամակատարն ու
կանչեց.

— Սերոբյան...

Տաճատիկը հակառակորդի ձեռքերը բաց թողեց ու
թռավ նամակատարի մոտ, նամակը հափշտակեց ու վա-
զեց տուն:

— Հայրիկից նամակ, հայրիկից նամակ... — աղաղակեց
նա ու նամակը հանձնեց մայրիկին: Երկար ժամանակ մայ-
րիկը չէր համարձակվում ծրարը բացել, իսկ Տաճատիկն
անհամբերութունից չէր կարողանում տեղում հանգիստ
կանգնել ու մտքում կրկնում էր.

«Մենք սովետական զորքերս առաջ ենք շարժվում
քաջարա»:

Հանկարծ նայեց մայրիկի երեսին ու տեսավ, ինչ-
պես նրա գույնը սպիտակեց. նամակը ձեռքում դողաց-
ր. Մյուս կողմից տատիկը եկավ ու կմկմաց.

— Ի՞նչ, ի՞նչ է գրել...

Մայրիկը հազիվ կարողացավ կարդալ.

«Վիրավորված եմ ոտքից, այժմ պառկած եմ հիվան-
դանոցում, ինձ խնամում են շատ լավ, իմ մասին չմտա-
ծեք, շուտով կլավանամ. ամիսոս, որ մի կովոդ ձեռք պա-
կասեց»... Վերջում չէր մոռացել գրել. «շատ կարոտով
համբրւում եմ իմ Տաճատիկին»:

Մայրիկը, տատիկը լուռ էին և տխուր: Տաճատիկը
նույնիսկ նրանց աչքերում արցունքներ տեսավ, ինքն էլ
տխուր գլուխը թեքեց կրծքին: Ուզում էր մայրիկին և
տատին մի լավ բան ասել, ուրախացնել, բայց չէր կա-
րողանում:

Այդ օրը նա բաւ չի ջալ և ընկերների հետ չխաղաց։ Երեկոյան եկան հայրիկի և մայրիկի բարեկամները, տու-
նը լցվեց մարդկանցով։ Հայրիկի նամակը ձեռքից ձեռք
էր անցնում, հերթով կարդում էին և ամեն կերպ աշխա-
տում տատիկին ու մայրիկին հանգստացնել։

— Մի կովոդ ձեռք պակասեց, — շնջում էր Տաճատիկն
ու ափսոսում, որ իր հայրը կռվից ետ էր մնացել։ Այդ
օրը բոլորը խոսում էին պատերազմի մասին։ Սովետական
զորքերի հաղթանակների մասին և ոչ ոք ուշք չէր դարձ-
նում Տաճատիկի վրա։

Տաճատիկը գնաց ննջարան ու երկար ժամանակ այն-
տեղից դուրս չէր գալիս։

Հանկարծ ննջարանի դուռը բացվեց ու շեմքում կանգ-
նեց Տաճատիկը՝ հոր սապոգները հագին, փայտե հրացանն
ուսին...

— Այդ ի՞նչի ես պատրաստվել, Տաճատիկ, — հարցրեց
քեռին զարմացած։

— Գնում եմ հայրիկիս փոխարեն կռվելու, — ասաց Տա-
ճատիկն այնպես վճռական, որ հյուրերը իրար երես նա-
լեցին, ժպտացին։

— Բայց չէ որ դու փոքր ես, — շարունակեց քեռին։

— Ես մեծ եմ, տես, — Տաճատիկը իր փայտե հրացանը
ուղղեց մի կետի պատրաստ կրակելու...

Մայրիկը, տատիկը իրենց վիշտը մոռացած նայում
էին Տաճատիկին ու հաղիվ էին իրենց ծիծաղը դապում,
ասելով.

— Իսկական զինվորացու է...

Տաճատիկի սապոգները այնպես ճոռացին հատակին,
որ թվաց թե մի ամբողջ վաշտ է շարժվում։

Տաճատիկի աչքերը փայլատակեցին, նա ձգվեց իս-
կական զինվորի նման ու մեկ-երկու քայլեց համոզված, որ
ինքը գնում է հայրիկի փոխարեն կռվելու։

ԿԱՐՄԻՐ ԴՐՈՋ

Նրեկո էր. աշխատանքից տու՛ն էր վերադարձել հայ-
րիկը և թախտին թիկնած՝ հանգստանում էր. փոքրիկ
տղան, 9 տարեկան Վահագնը վաղեց հայրիկի մոտ և խընդ-
րող աչքերով նայեց նրա վրա:

Հայրիկը դանդաղ հանեց ծխատուփը, ծխախոտ վա-
ռեց ու Վահագնին քաշեց իր թևի տակ:

— Աչքերիցդ հասկանում եմ, պատմություն ես ու-
զում լսել:

Այսօր ես քեզ կպատմեմ կարմիր դրոշի հետ կապ-
ված մի գեղեցիկ պատմություն:

Վահագնը ուրախ ճիչով փաթաթվեց հայրիկի պա-
րանոցին:

— Ինչ լավ է, պատմիր հայրիկ...

— Սիրելի Վահագն, ռազմաճակատում եղածս ժամա-
նակ շատ բան տեսա, շատ բան լսեցի, բայց ամենից շատ
ինձ հուզեց մի դեպք, որ աչքովս տեսա, և որ կապված
է մի ու՛ռ, փոքրիկ տղայի հետ:

Դեպքը պատահեց այն օրերին, երբ Փաշխատներին
ջախջախում էինք ու դուրս շարտում մեր հայրենի գյու-
ղերից ու քաղաքներից. ահա մեր գունդը ռուսական Ս.
գյուղը ազատագրեց Փաշխատներից. բնակիչները ուրախ
աղաղակներով էին դիմավորում, փաթաթվում համբուրում
էին մեզ, որպես իրենց ազատարարներին:

Բայց ամենից ուրախ մեզ դիմավորեց մի ու՛ռ,

փոքրիկ տղա. Հազիվ նա լինելը 9-10 տարեկան, իսկական
քո հասակին էր, միայն թե մազերը շեկ էին, երեսը պե-
պենոտ, աչքերը կապույտ:

Արագ վազելուց նա հետև էր, քրտնած էր ու թևի
տակ մի կապոց էր սեղմել, այնպես ամուր:

Նա մոտեցավ մեզ ու հարցրեց.

— Ընկեր մարտիկներ որտե՞ղ է հրամանատարը, բան
պիտի ասեմ...

Մենք փնտրեցինք, գտանք հրամանատարին և
հայտնեցինք, որ մի փոքրիկ տղա ուղուց է նրան տեսնել:

Ու երբ մեր հրամանատարը ժպիտը դեմքին մոտե-
ցավ անծանոթ տղային, այդ ժամանակ տղան ձգվեց ու
զինվորական բարև տվեց.

— Անուն, ազգանունդ, — հարցրեց հրամանատարը.

— Ֆեդկա Գորբատով, — պատասխանեց տղան ձիգ,
անշարժ կանգնած:

— Ֆեդկա Գորբատով, — կրկնեց հրամանատարը, — ասա
ինչու էիր ինձ հարցնում:

— Ընկեր հրամանատար, — հնչեց տղայի զիլ ձայնը, —
շարքային զինվոր Նիկոլայ Կրեստնիկովից ձեզ նվեր եմ
բերել, ստացե՞ք այնպես, ինչպես կար...

Ու նա թևի տակից հանելով կապոցը, մեկնեց հրա-
մանատարին: Ամենքս լուռ, սրտատրոփ սպասում էինք,
թե ի՞նչ էր լինելու այն կապոցի մեջ:

— Շարքային զինվոր Նիկոլայ Կրեստնիկովից նվեր...
կրկնեց հրամանատարը, ապա զգուշութամբ բացեց կա-
պոցը և այնտեղից հանեց կարմիր մետաքսյա մի դրոշ և
օղում ծածանեց:

— Ահա թե ի՞նչ, փոքրիկ տղա, ուրեմն քեզ են պահ
տվել Ն. գնդի դրոշը...

— Տղան գլխով արեց, համարձակ նայելով հրամա-
նատարի աչքերին:

— Այդ ինչպես պատահեց, հարցրեց հրամանատարը տղայի գլուխը շոյելով հայրաբար: Կնճիռներ հավաքվեցին տղայի ճակատին: Նա իր մանկական վճիտ ձայնով սկսեց պատմել թե ինչպես և որտեղ էր պահել գնդի դրոշմ:

Հայրը լռեց, մի նոր ծխախոտ վառեց, իսկ Վահագնը հետաքրքրութունից այրված ճչաց:

— Պատմիր, հայրիկ, հետո ի՞նչ եղավ...

Հայրը շարունակեց իր կիսատ թողած պատմությունը, նայելով տղայի փայլատակած աչքերի մեջ:

— Պատահում է այնպես, որ մեր զորքերը ժամանակավորապես թողնում են ուսանական Ս. գյուղը և անհրաժեշտ ետևից ֆաշիստ գայլերն են գյուղ մտնում: այրում, սպանում մարդկանց, այդ ժամանակ Ֆեդկան ու նրա մալրը, ծանր վիրավոր մի ուս գինվորի թաքցնում են իրենց ցախատանը:

Ռուս փոքրիկ տղան ամեն օր գաղտնի ջուր և ուտելիք է տանում վիրավոր գինվորի համար ու մտերմանում է նրա հետ, կողքից չի հեռանում:

Իսկ գինվորը վերքի ցավերը տանում է լուսթյամբ և սիրով նայելով տղային ասում:

— Ֆեդկա, իմ տղաս, ամուր մնացե՞ք, մերոնք ֆաշիստներին կհաղթեն ու նորից կգան...

Իսկ Ֆեդկան լսում է և անհամբեր սպասում այդ երջանիկ օրվան: Քանի գնում վիրավոր գինվորի վիճակը ծանրանում է, նա ավելի քիչ է խոսում, դժվար է շնչում: Մեռնելու օրը ուս գինվորը Ֆեդկային է հանձնում սպիտակ շորի մեջ փաթաթած մի կարմիր դրոշ ասելով:

— Տես, Ֆեդկա, այս դրոշը մեր գնդի դրոշն է, մեր ազատության դրոշն է, մեր պատիվն է:

Այս դրոշի համար ես իմ արյունը տվի, բայց չթողի
որ թշնամու ձեռքն ընկնի:

Հռուս է, նորից ուժեր հավաքում, վերջին անգամ
կրկնում:

— Տես, Ֆեդկա, այս դրոշը ամուր պահիր, որ Ֆաշիստ-
ների ձեռքը չընկնի... հենց որ մերոնք դան, տար քո
ձեռքով հանձնիր հրամանատարին ու ասա, շարքային
զինվոր Նիկոլայ Կրեստնիկովից ձեզ նվեր... Այլևս նա չի
կարողանում շարունակել, աչքերը փակվում են մշտապես:

— Ընկեր Կրեստնիկով, կկատարեմ քո պատվերը, —
երդվում է Ֆեդկան լացակումած:

Ֆեդկան սաստիկ տխրում, լաց է լինում, բայց հե-
տո նա զգաստանում է հիշելով, որ ինքը պետք է կատա-
րի Կրեստնիկովի խնդիրը՝ դրոշը մի այնպիսի տեղ թաքցնի,
որ ոչ ոք չգտնի: Ֆեդկան որոշում է դրոշի մա-
սին նույնիսկ մայրիկին չասել և սկսում է փնտրել մի
ապահով տեղ:

Վերջապես գտնում է այդ ապահով տեղը և ցախա-
տան կիսաքանդ պատի քարերի մեջ պահում է դրոշը:

Ու այդ օրվանից փոքրիկ տղան հանգիստը կորցրած,
ամեն ժամանակ գնում, ստուգում է պատի քարերը. չի
մոռանում Նիկոլայ Կրեստնիկովի պատվերը, մտքում կրկ-
նում է շարունակ—ամուր պահիր կարմիր դրոշը...

Ֆեդկան պատմելու միջոցին այնպես լուրջ էր, այն-
պես մռայլ, որ մեզ թվում էր, թե մեր դեմ կանգնած
է ոչ թե տաս տարեկան մի տղա, այլ չափահաս մի
զինվոր:

Նրա ճակատի կնճիռները ցրվեցին, ժպտաց:

— Նիկոլայ Կրեստնիկովը, զիտեր, որ մերոնք նորից
պիտի դան:

Ուրախ բացառանշու թյունների մեջ Ֆեդկայի ձայնը
խլացավ. հրամանատարը հուզմունքից դողալով զրկեց տղա-
յին, համբուրեց ու ասաց:

— Կեցցես Ֆեդկա, որ այդպես քաջ ես ու հավատա-
րիմ քո հայրենիքին, քեզ կպարգևատրենք:

Այդ նույն օրը ողջ գնդի առաջ, հրամանատարը հան-
դիսավոր կերպով Ֆեդկա Գորբատովին հանձնեց Խիզա-
խուժյան մեդալ, ասելով.

— Փառք շարքային զինվոր Նիկոլայ Կրեստնիկո-
վին և Ֆեդկա Գորբատովին, որ գնդի դրոշը պահել են
մինչև վերջ: Մենք այս դրոշը ամուր պահած մեր ձեռ-
քերում, բարձր պահած՝ կքայլենք առաջ...

Մենք զինվորներս ասում էինք միմյանց՝ ի՞նչ խելա-
ցի, ի՞նչ հայրենասեր տղա է Ֆեդկան:

Հայրը լուեց, ծխախոտի ծուխը դուրս թողնելով բե-
րանից:

Վահագնը խորը տալավորված հոր պատմածից, ոչինչ
չէր կարողանում ասել:

— Այդպես, Ֆեդկայի նման եղիր դու էլ, սիրիւր կար-
միր դրոշը, որ մեր մեծ ազատության դրոշն է, — ասաց
հայրը տղայի գլուխը շոյելով...

Այդ պատմությունը լսելուց հետո, Վահագնը մի քա-
նի օր շարունակ, տանը թե դպրոցում, շշնջում էր.

— Կարմիր դրոշ... Ֆեդկան... Կարմիր դրոշ...

ՆՐԱՆՔ ՊԱՅՔԱՐԵԼ ԷԻՆ

ՀԱՍԵԼ Է ԺԱՄԸ

Սաթենիկ և Գարիկ Հակոբյանները՝ մայր և որդի, ապրում էին ծովափնյա մի գեղեցիկ քաղաքում:

Գարիկը փոքր, սևաչվի ու ժիր մի տղա էր. նոր էր պիոններ դարձել, կապել կարմիր փողկապ և դրա համար նա այնքան ուրախ էր, այնքան երջանիկ: Իսկ մայրիկը գործարանում բանվորուհի էր, ուրախանում էր իր աշխատանքով և իր պիոններ տղայով:

Բայց հանկարծ կյանքը փոխվեց, Հայրենական Մեծ Պատերազմի օրերին Փաշիստները հարձակվեցին և գրավեցին այն գեղեցիկ քաղաքը, որտեղ ապրում էին մայր և որդի: Նրանք ժամանակավորապես ընկան Փաշիստների լծի տակ: Գարիկի ուրախ ժպիտը չքացավ, որովհետև էլ չէր վազելու. պիոններական աշխույժ պարապմունքների, իսկ մայրիկն էլ չէր գնալու գործարան:

— Գարիկ փողկապդ պահիր, թող թշնամին չիմանա, որ դու պիոններ ես, ես էլ պարտիական տոմսս պահեմ, — ասաց մայրը հառաչելով:

Գարիկն արձակեց կարմիր փողկապը և պահեց մի այնպիսի տեղ, որ ոչ ոք չգտնի, ապա իր խելացի սև աչքերը դարձնելով մայրիկի վրա, հարցրեց.

— Մինչև երբ չեմ կապելու փողկապս...

— Մինչև մերոնք նորից հաղթեն, — պատասխանեց մայրիկը վճռական նայելով տղայի աչքերի մեջ ու ավելացրեց.

— Գարիկ, սիրելիս, հասել է ժամը, մենք քուն ու գադար չպետք է ունենանք, մենք պետք է օգնենք մեր հայրենիքի այս մեծ պայքարին:

Ու այդ օրվանից սկսվեց նրանց պայքարի հետաքրքիր պատմությունը:

Նրանք ապրում էին քաղաքի ծայրամասում, նրանց մոտ գիշերները գալիս էին բանվոր Աֆանասին, բանվորուհիներ՝ Կսենյան, Ակսինյան, որոնք աշխատում էին մայրիկի հետ միևնույն գործարանում: Լույսը մարում և խոսում էին նրանք շշուկով:

Այդ ժամանակ Գարիկն իր պարտականությունն ուներ, դուրսը պահակ էր կանգնում, որ վտանգի ժամանակ նրանց հայտնեի:

Գարիկը հասկանում էր, որ մայրիկը և ընկերները գաղտնի պայքարի մեջ էին, իսկ ինքը պետք է օգներ նրանց: Հետո երբ ժողովը վերջանում էր, նրանք նորից ծածուկ իրենց տեղերն էին գնում:

Մի անգամ մայրիկը Գարիկին իր մոտ կանչեց և ջնջաց նրա ականջին.

— Քեզ, սիրելի Գարիկ, խնդիր եմ տալիս, որ գնաս Քաշիստների պահեստի մոտ շրջես ու տեղեկություններ քերես՝ որտեղ ինչպես են պահակները հսկում: Տես, Գարիկ, այնպես զգույշ, որ չկասկածեն քեզ վրա:

Երբ մայրիկը առաջին անգամ այդպիսի հանձնարարություն տվեց Գարիկին, տղան ինքն իր աչքում և մեծացավ և հզորացավ:

— Լավ, — պատասխանեց տղան և իր անելիքը մտքում ըրոշեց:

Երեկոյան նա վերադարձավ փոշոտված ոտքերով,
հոգնած և ինչ որ տեսել էր պատմեց մայրիկին:

Մայրիկը համբուրեց տղայի ճակատը, երբ մութը
իջավ պատրաստվեց տանից գնալու:

— Այդ ուր, մայրիկ, — հարցրեց տղան.

Մայրը տղային հասկացրեց որ լռի, ապա դուռը նրա
վրա փակեց ու գնաց:

Առավոտը քաղաքում լուր տարածվեց, որ պարտիզան-
ները ֆաշիստական զինապահեստը պայթեցրել էին:

Առավոտը մայրիկը տուն մտավ գունատ, հոգնած
ու դիմեց տղային.

— Դուռը չէն ծեծել, ինձ չէն հարցրել.

— Ո՛չ, — պատասխանեց Գարիկը:

Այն ժամանակ մայրը խորհրդավոր ժպտաց և կռա-
ցավ տղայի ախանջին շշնջաց.

— Այս մեկը հաջող անցավ:

Գարիկն ամեն ինչ հասկացավ:

Փաշիստները թալանում և սպանում էին սովետա-
կան մարդկանց. մայրիկի և ընկերների պայքարը սասա-
կանում էր, նրանց էր հասել ընկեր Ստալինի հետևյալ
խոսքերը.

«Ավերել թշնամու կասլի և տրանսպորտի միջոցները,
ոչնչացնել թշնամու շտաբներն ու տեխնիկան»:

Գարիկը չէր մոռանում պիոներական երգումը՝ վի-
նել օրինակելի պիոներ, լինել միշտ պատրաստ:

Մոտենում էր մալիսմեկյան տունը, մայրիկը հուզված
էր ու անհանգիստ. երեկոյան եկավ բանվորուհի Կսեն-
յան և ծոցից հանեց մի փաթեթ տվեց մայրիկին ու շշն-
ջաց.

— Այս դիշեր պետք է տարածել:

Մայրիկը փաթեթը պահեց և Կսենյայի հետ դուրս
եկավ: Գարիկն իսկույն վրա ընկավ, փաթեթը բացեց:

տեսնի ինչ կա այնտեղ, տեսա՞վ փոքրիկ սպիտակ թղթեր,
որոնց վրա գրված էր՝ մահ Փաշխատական զավթիչներին,
կեցցե մայիսի մեկը, կեցցե Ստալինը...

Երբ կարդաց Ստալինի անուշը, ուրախությունից քիչ
մնաց աղաղակեր...

— Ես պիտներ եմ, պետք է օգնեմ այս մեծ պայքա-
րին, — որոշեց աղան իր մտքում և թղթերից վերցրեց
ծոցը դրեց:

ԻՆՉՊԵՍ ՆՐԱՆԻ ՀԱՆԴԻՊԵՑԻՆ

Մայիսի մեկի գիշերն էր. փչում էր զով քամին. ծո-
վափնյա քաղաքը գտնվում էր Փաշխատական խիստ չըս-
կողության տակ: Զինված Փաշխատները շրջում էին ամեն
տեղ: Չնայած դրան, սովետական համարձակ մաշդիկ գի-
շերը հանգիստ չքնեցին, ահա մեկը, մյուսը գաղտնագողի
շրջում էին փողոցներում: Ո՞վ էր այն հանդուգն փոքրի-
կը, որ մի պահ կանգ առավ՝ մեծ շենքի պատի տակ, որ-
տեղ այժմ թշնամու շտաբն էր: Ծոցից հանեց մի թղթի-
կտոր և կալցրեց պատին: Ասես մարդու ձեռք չէր, այլ քա-
մին էր այստեղ-այնտեղ պատերին փակցնում սպիտակ
թղթերը: Վերջին թուղթն էր ուղղում փակցնել նախկին
Քաղսովետի շենքի պատին, երբ երեսին լիճավ-շրախկ, մի
սպտակ: Նրան թվաց, թե պատը փլվեց երեսին, բայց մըթ-
նում տեսավ մի դաժան կերպարանք, որ քիչ էր մնում
նրան հոշոտելու: Լսել էր, որ դրանց գեստապոյականներ
էին՝ ասում:

— Այս ինչ բանի ես, լակոտ, — գերմաներեն մըթմըթաց
այն մարդը:

— Ոչ մի բանի, — պատասխանեց փոքրիկը համարձակ
և փորձեց փախչել, բայց արդեն գտնվում էր թշնամու
ճիրանների մեջ: Այդ փոքրիկը Գարիկն էր, որ կես

գիշերին դուրս էր եկել փողոց և Մայիսմեկյան թռուցիկներ էր փակցնում պատերին:

Առավոտը Գարիկին տարան կատաղած գեստապոյականի մոտ հարցաքննութիւն:

Տղայի գունատ դեմքին փայլատակում էին ցասումով լցված աչքերը:

— Այդ դու էիր գիշերը... հարցրեց սպան կռաւիտ:

Տղան գլուխը պտտեց բացասաբար:

— Ո՛չ:

— Առ քեզ, սուտ ասելուդ համար, — սպան ապտակեց տղային: Ասեա ապտակը Գարիկին չկալով այլ պատին, նա կանգնած էր անշարժ: Քիչ հետո սպան կեղծ ժպտալով գիմեց նրան:

— Ասա ովքեր են քո ընկերները, ովքեր տվին քեզ այդ վնասակար թղթերը:

— Ոչ ոք, — պատասխանեց Գարիկը և սրհամարհանքով երեսը շրջեց նրանից:

Գարիկին թանկ նստեցին այդ պատասխանները:

Նրան սաստիկ ծեծեցին, երեսը ու ձեռքերը արյունոտված, ուժաքամ վիճակում դուրս տարան: Գարիկն իր մարմնի ցավերը մոռացած մոր մասին էր մտածում, թե նա ինչպէս ինչպէս կանհուն գատանա:

Մեկ օր հետո նրան երեկոյան նորից տարան Փաշիստ սպայի մոտ հարցաքննութիւն: Տղան կիսամութ սենյակում նկատեց ձեռքերը ետև կապած մի կնոջ, որի վրա գոռում էր Փաշիստ սպան:

— Ասա ճանաչում ես դու, այս լակոտին, — մռնչաց Փաշիստը ցույց տալով դեպի դուռը, որտեղից ներս բերին տղային: Կինը շրջվեց դեպի դուռը ու այլալված քարացավ տեղում, մոր և որդու հայացքները հանդիպեցին միմյանց: Տղան քիչ մնաց աղաղակեր ու փաթաթվեւր մորը, բայց

Վայրը հետ-հետ քաշվեց. գլուխը պտտեց ու աչքերով
սաստեց տղային:

Տղան նույնպես հետ քաշվեց:

— Ասա, լակոտ, չե՞ս ճանաչում այս կնոջը, — հնչեց
սպայի խռպոտ, անդուր ձայնը:

Տղան գլուխը պտտեց ու ատամների արանքից դուրս
թռավ:

— Ո՛չ...

Մայրը ատամները սեղմած՝ գլուխը խոնարհել էր
կրծքին, որպեսզի չհանդիպի իր հարազատ որդու հայաց-
քին ու չմատնի նրան:

Գարիկն այնպես էր ուզում գրկել, համբուրել իր
տանջված մորը, բայց անկարող էր — թշնամին գայլի աչ-
քերով նայում էր նրանց: Մայր ու որդի իրար դեմ կանգ-
նած, ցուց չտվին, որ ճանաչում են միմյանց և ոչ մի
բառ դուրս չթռավ նրանց շուրթերից:

— Եթե չխոստովանվեք ովքեր են ձեր ընկերները,
ձեզ կկախենք, — գոռաց սպան ավելի ուժգին:

Նրանք դարձյալ լուռ էին:

Մորը, որդուն և ուրիշ սովետական մարդկանց Փա-
շխատները տանջեցին գաղանաբար, բայց նրանք ոչ մի
ընկերոջ անուն չտվին:

Մայրը շշնջում էր շարունակ:

— Իմ խեղճ Գարիկ, իմ որդիս, երանի ամեն տանջանք
միայն ինձ տային:

Տղան շշնջում էր կիսաուշադնաց վիճակում.

— Իմ խեղճ մայրիկ...

Նրանց մահ էր սպասում, եթե պարտիզանական ջո-
կատները մի գիշեր չհարձակվեին բանտի վրա և նրանց
չաղատեին Փաշխոտական ճիրաններից:

Հաղթանակի օրն էր, մայիսի 9-ը: Չարդարվել էր ողջ բնությունը: Ծաղկել էին ծառերը, ծաղիկները: Տոնում էր ողջ Սովետական Միությունը: Չարդարվել էին քաղաքներն ու գյուղերը:

Տոնում էր և այն ծովափնյա գեղեցիկ քաղաքը, որն այժմ զարդարված էր կարմիր դրոշներով: Հաղթող զինվորները, սովետական քաղաքացիներ, երիտասարդներ ու պատանիներ ուրախ ժպիտներով շնորհավորում էին միմյանց հաղթանակի առթիվ: Քաղաքի փողոցները, հրապարակը թնդում էին ուռուաներից: Այդ ժամանակ բոլորի ուշադրությունը դրավեց կարմիր փողկապով սևաչվի մի պիոներ և նրա կողքից դնացող բարձրահասակ, դուռնատ կինը: Մատնացույց էին անում նրանց վրա: Ինչպե՞ս հաղորդում:

— Ահա մայր և որդի...

— Նրանք իսկական հերոսներ են...

— Նրանք պայքարել են հաղթանակի համար...

Եվ պատմում էին միմյանց նրանց պայքարի հետաքրքիր պատմությունը:

Դրանք Սաթենիկ և Գարիկ Հակոբյաններն էին, դուրս էին եկել փողոց հաղթանակի տոնին մասնակցելու:

Մայր և որդի անհագ աչքերով նայում էին ծածանվող կարմիր դրոշներին, Լենինի-Ստալինի շողշողուն նկարներին և հրճվում:

Սիրով և հարգանքով լցված բազմաթիվ հայացքներ ուղեկցում էին մորը և որդուն, որ քալում էին կողք-կողքի ազատ, համարձակ և երջանիկ ժպտում:

ԱԶԽԱՏԱՍԵՐ ՍՈՒՍԱՆԸ

—Վահանիկ մի աղմկի՛, գնամ ճաշը տաքացնեմ, — այդպես ասողը ընդամենը 9 տարեկան մի աղջիկ էր, անունը Սուսան — սև աչքերով, սև մազերով, ծիտիկի պես ծըլվրլան սև աշխույժ։ Իրենից երեք տարով փոքր եղբորը հա տուն էր բերել մանկապարտեզից, այժմ էլ դբադեց-հուռն էր մինչև մայրիկը վերադառնար գործարանից։

Իսկ Վահանիկը կլորիկ գեմքով, կարմրիկ այտերով չարաճճի և լալիան տղա էր, քույրը այդ լավ գիտեր, դրա համար հրա հետ զգույշ էր վարվում, որ ձայնը չդնի։

Ահա խոհանոցից վաղելով եկավ, եղբոր կողքին նրստեց ու նկարագարդ գիրքը բացելով, ուսուցչուհու նման սկսեց։

— Սա օդանավ է, տե՛ս, սա էլ օդաչու, — մատը դրած նկարներին ավելացրեց երգելով՝

— Միշտ թռչում են երկնքում։

— Սա էլ շնիկ է, հա՛ֆ. հա՛ֆ, — բացադանչեց Սուսանը ծիծաղելով, — բայց չի կծում, նկարած է չվախենա...

— Հա՛ֆ-հա՛ֆ կրկնեց Վահանիկն ու սկսեց թաթիկներով նկարին խփել։

— Վա՛յ կփչացնես, էլ ցույց չեմ տա, — բարկացավ քույրն ու խիստ հայեց եղբոր վրա։

Վահանիկը վախեցած քրոջ սպառնալիքից, թաթիկները քաշեց ու հանդարտ նստեց։

Այդ միջոցին Սուսանը ծլկեց խոհանոց ու վերադարձավ.

— Ճաշը տաքացել է, երբ կգա մայրիկը:
Իսկ Վահանիկը մատը պարզած ասում էր.

— Էլի նկար տուր...

— Սա գնացք է, վազում է երկար ու լսերի վրայով,
մարդկանց տանում հեռու, չի՞ք-չի՞ք-չի՞ք:

— Չի՞ք, չի՞ք, — կրկնեց Վահանիկն ուրախ.

«Երանի Վահանիկը միշտ այսպես ուրախ լինի»-մտածում էր քույրը, թե չէ, որ սկսում է լացը, քիչ է մնում Սուսանն էլ լաց լինի ու չի իմանում ինչպես հանգստացնի եղբորը, մեկ էլ տեսավ Վահանիկը դիրքը քաշքշու՞մ քիչ է մնում պատառոտի:

— Այ դու չար, — մատը թափահարեց Սուսանը, — ախր փչացնում ես իմ սիրուն դիրքը, այցույց չեմ տա մոռանին...

— Վահանիկը հենց որ լսեց մոռանի անունը, լուռ սպասողական նստեց:

Այդ ժամանակ դուռն մոտ լավեց ոտնաձայն, Սուսանը տեղից ցատկեց. — վազեց, Վահանիկն էլ նրա ետևից:

Դուռը բացվեց ու ներս մտավ երեխաների մայրը՝ սև աչքերով, բարձրահասակ մի կին:

— Սիրելիներս, շատ եք սպասել, Վահանիկը լաց է եղել, — հնչեց մայրիկի քաղցր ձայնը:

— Ոչ մայրիկ ջան, Վահանիկը լաց չի եղել, նկարներ էի ցույց տալիս. ճաշը տաքացրել եմ, — շտապեց հայտնել Սուսանը, մեծավարի ձիգ կանգնած:

— Ապրես, Սուսան ջան, այսօր էլ մայրիկիդ օգնեցիր:

Սուսանի համար ամենամեծ ուրախությունն էր, որ մայրիկը գովում էր նրան իրեն օգնելու համար:

Բայց ինչու ուրիշ օրերի պես այդ օրը մայրիկը
երկար չխոսեց և գունատ էր, մտածեց Սուսանը:

Մայրիկն ուզեց գնալ խոհանոց, Սուսանը նրանից
առաջ ընկավ:

— Դու մի գնա, ես կբերեմ ճաշը:

— Լավ կանես Սուսան ջան, գլուխս ցավում է, — մայ-
րիկի շուրթերը դողում էին և հազում էր:

Տանտիրուհու լրջությամբ Սուսանը վազեց խոհա-
նոց, ճաշը բերեց:

Ամանները դարսեց սեղանին:

Մայրիկը ոչինչ չկերավ, վահանիկին էր կերակրում:

— Մայրիկ ջան, ինչո՞ւ չես ուտում, — հարցրեց Սու-
սանը տխուր:

— Ախորժակ չունեմ, — պատասխանեց մայրը:

Երբ ճաշը վերջացրին, մայրիկը պառկեց իր մահճա-
կալին և Սուսանին խնդրեց վրան ծածկել: Սուսանը
մայրիկին ծածկեց, խաղալիքները լցրեց եղբոր առջև ու
զգուշացրեց:

— Տես կամաց, մայրիկի գլուխը ցավում է:

Վահանիկն ասես հասկացավ և անկյուն քաշված՝ խա-
ղում էր: Սուսանը ման էր դալիս ոտների ծայրերի վրա:
Նա արագ-արագ սեղանը հավաքեց, գնաց խոհանոց, աման-
ները լվաց, բերեց դարսեց պահարանը և ամեն անգամ
մայրիկի կողմն էր նայում: Հենց որ մայրիկը հազում էր,
նա էլ հետը ցնցվում էր:

— Վա՛յ մայրիկ ջան, — շշնջալով:

Երեկո էր, լույսերը վառվեցին, բայց մայրիկը ան-
կողնուց վեր չկացավ: Սուսանի համար այնպես անսովոր
էր ու այնպես տխուր, երբ մայրիկն տանն էր ու չէր
խոսում:

Ձէ որ ամեն անգամ, նա աշխույժ ծիծաղելով պատմում էր իրենց դործարանից, թե ինչպէս են բանվորները հնգամյակի պլանները կատարում:

Մայրն աշխատում էր կարի դործարանում, որտեղ ձեւում ու կարում էին շատ—շատ հագուստներ:

— Իսկ դու Սուսան, օգնիր մայրիկիդ, որ նա լինի առաջավոր, — ավելացնում էր մայրիկը:

Սուսանի փոքրիկ գլխում դարձվում էին այդ մտքերը ամուր շատ ամուր, նա թռչկոտելով կրկնում էր.

— Օգնեմ, որ մայրիկս լինի առաջավոր:

Վահանիկն սկսեց խաղալիքները չխշխկացնել, Սուսանը ուշքի եկավ ու մատը թափահարեց:

— Ձեռ տեսնում, մայրիկի գլուխը ցավում է, նա հիվանդ է...

Վահանիկն այտերն ուռեցրեց, քիչ էր մնում լաց լինի:

Սուսանը վազեց եղբոր մոտ, նրան դբաղեցրեց խաղալիքներով և գեղեցիկ նկարներ ցույց տալով:

Այդ ժամանակ մայրիկը երեսը դարձրեց նրանց կողմը, նա այնպէս կարմրել էր, այնպէս արագ էր շնչում:

— Վահանիկին անկողին դիր, թող քնի, — դիմեց մայրը աղջկան:

Սուսանը մայրիկի կարգադրությունը անմիջապէս կատարեց:

Վահանիկը դիմադրում էր, չէր ուզում քնել, իսկ Սուսանը քնքուշ-քնքուշ համոզում էր եղբորը:

— Որ չքնես մայրիկը քեզ չի սիրի, ես էլ քեզ վաղը մանկապարտիզ չեմ տանի:

Վահանիկին քունը հաղթեց, աչքերը փակվեցին:

Սուսանը նորից հայտնեց մայրիկին, — այս էլ կատարեցի, հիմի ի՞նչ անեմ, — ապա ձեռքը դրեց մայրիկի ճակատին:

Նա վախեցած ձեռքը քաշեց, այնպես տաք էր մայրիկի գլուխը, մայրը տեսավ, որ աղջիկը լուռ ու տխուր կանգնել է կողքին, ասաց...

— Մի մտածի, առավոտը լավ կլինեմ, կգնամ աշխատանքի, իսկ դու նստի դասերդ պատրաստի:

Վահանիկը մուշ-մուշ քնած էր, մայրիկը լուռ էր, միայն լավում էր նրա բարձր ու անկանոն շնչառությունը: Գարնանային կարճատև արձակուրդը վերջանալու մոտ էր, հարկավոր էր բոլոր դասերը կրկնել:

Ոչինչ բոլորը կհասցեմ, այսօր հայոց լեզուն, վաղը թվաբանությունը, շնչում էր աղջիկը: Հենց որ մայրիկն անհանգիստ շարժվում էր անկողնում, կամ հագում, նա վեր էր թռչում վազում մոտիկ հարցնում.

— Ասա, մայրիկ ջան, ի՞նչ ես ուզում:

— Ոչինչ չեմ ուզում, դնա դասդ պարապի, — պատասխանում էր մայրը, աշխատելով թաքցնել իր անհանգիստ վիճակը:

Առավոտը սովորականից վաղ դարձնեց Սուսանը, շորերը կիսահագնել, զգույշ մոտեցավ մայրիկի անկողնու վրա կռացավ.

— Սուսան, փորձեցի վեր կենալ, գլուխս պտուխս եկավ, չկարողացա, — ասաց մայրը տաքությունից այրվող աչքերը դարձնելով աղջկա վրա: Այնպես վատ եղավ Սուսանը, այնպես տխրեց.

— Մայրիկ ջան, բժիշկ կանչեմ:

— Լավ կլինի, որ բժիշկ կանչես, շուտ լավանամ, աշխատանքներս չմնան, — պատասխանեց մայրը հազի միջից:

Մայրիկը հիվանդ է, իսկ ես առողջ եմ, մտածեց Սուսանն ու արագ-արագ անցավ դործի:

Նախ և առաջ Վահանիկի շորերը հագցրեց, թեյ պատրաստեց, Մայրիկին ու Վահանիկին թեյ տվեց:

Հետո էլ Վահանիկի վերարկուն հագցրեց ինքն է
վերարկուն հագաւ:

Վահանիկն ուրախությունից ծափ-ծափ էր անում,
նա սիրում էր մանկապարտեզը, որտեղ շատ խաղալիք-
ներ կային:

— Տես, մայրիկ ջան, չբացվեա, Վահանիկին ես ման-
կապարտեզ տանեմ, որ քեզ չխանդարի, — դիմեց Սուսանը:
Մայրը համաձայնության նշան արեց գլխով:

* * *

Պարնան արևն էր շողում, ծիտիկներն ուրախ ծլվը-
րում էին, նոր բողբոջած ծառերի ճղներին, այնպես լավ
էր՝ դուրսը, քույր ու եղբայր գնում էին մայթով, շնչում
մաքուր օդը: Վահանիկը գլուխը շուռ ու մեռ էր տալիս
զարմացած նայում ավտոների, տրամվայի ետևից: Սու-
սանը քայլերն արագացրեց հիշելով, որ ինքն այնքան
գործ ունի: Մանկապարտեզի դռանը հասնելով, նա եղ-
բոր ձեռքը բաց թողեց ու նայեց ետևից, մինչև որ նա
խառնվեց երեխաների խմբին:

— Այս էլ վերջացրի, — շնչաց Սուսանն ու թիթեռի
պես թռավ: Նա ճանապարհը ծռեց, գնում էր ձախ մայ-
թով ու նայում էր շենքերին: Հիշեց, որ մայրիկն ասել
էր սե շենք է սպիտակ դուռ ունի, դռան վրա գրված էր՝
առաջին ամբուլատորիա:

— Պատա, — ուրախությունից քիչ մնաց աղաղակեր, աղա
արագ բարձրացավ աստիճաններով հանդիպեց մի մալ-
դի, ինչ որ բան հարցրեց մարդը ժպտալով մատը պարզեց
գեպի աջ: Աղջիկը թեքվեց աջ, մտավ մի երկար միջանցք
գնաց-գնաց կանգ առավ մի փոքրիկ պատուհանի առջև,
այնտեղ կանգնածներին նորից ինչ որ բան հարցրեց ու

ինքն էլ կանգնեց: Նրա սև, փալլուն աչքերը, աշխուժ հայացքը դրավեցին հերթապահ քրոջ ուշադրությունը:

— Թուեք այդ փոքրիկին, տեսնե՞նք ինչ է ուզում:

— Բժիշկ եմ ուզում, մայրիկս հիվանդ է,— հնչեց աղջկա ձայնը:

— Քեզանից մեծը չկա՞ր ձեր տանը:

— Ոչ,— պատասխանեց աղջիկը վերավորված.

Գուրը շարունակեց սիրալիր.

— Մայրիկիդ անուն — աղջանունը և ձեր հասցեն՝
նա առաջուց անգիր արած պատասխանեց.

— Անուշ Մատինյան, Թումանյան 7, — ուզեց վազել,
բայց հիշելով ետ դարձավ.

— Ի՞նչ կլինի բժիշկը շուտ դա... նրա խնդրող հա-
յացքից և ձայնից հերթապահ քույրը զգացվեց.

— Բժիշկն այժմ կակսի շրջել և կասեմ, որ առաջ ձեզ
մոտ դա, — հանդատացրեց աղջկան:

Սուսանը թեթե-թեթե իջնում էր աստիճաններից
ու մտածում՝ այս էլ վերջացրի:

Հանկարծ մեկը նրա ետևից կանչեց՝ Սուսան, ետ
դարձավ տեսավ իր ընկերուհի Անահիտը:

— Ինչու չէիր եկել պիոներական հավաքի, — հարցրեց
Անահիտը փաթաթվելով Սուսանին:

— Մայրիկս հիվանդ է. չէի կարող նրան մենակ թող-
նել, — պատասխանեց Սուսանը տխրությամբ:

— Ափսոս, — ասաց Անահիտը, ու խոսքը բերանին մեկ
էլ տեսավ Սուսանը կողքից թռավ...

Դպրոցումն էլ նա այնպես, անհանգիստ ու ժիր է,
դասերի ժամանակ կարգապահ, մտածում էր Անահիտը
ընկերուհու ետևից նայելով:

Սուսանը ներս մտավ հեալով, դիմեց մայրիկին.

— Ուշացել եմ...

— Ծիտ ես դարձել, մի քիչ կամաց, ախար, հոգնում ես, — հանդիմանեց մայրիկը, — ալժամ նստի հանդատացի:

Սուսանը չէր հասկանում հոգնելն ինչ բան է: Որքան աշխատում, այնքան առույգ էր դառնում: Եթե հանգիստ նստի, ապա ինչպես օգնի մայրիկին, — մտածում էր նա:

Հանկարծ նա պոկվեց տեղից, հիշելով, որ սենյակը պիտի մաքրի:

— Վահանիկ անպիտան, — փնփնթում էր Սուսանը, հատակից հավաքելով շաղ տված խաղալիքները, թղթի կտորները, բարձրացրեց իր նկարագարդ գիրքը, ծալեց խնամքով, դրեց սեղանին: Ապա բերեց նավթաշորը հատակը մաքրեց, մաքուր շորով աթոռների փոշիները վերցրեց:

Մայրիկը գաղտագողի նայում էր իր աշխատասեր աղջկան և մտածում, երանի հայրը տեսներ թե որքան են մեծացել Սուսանն ու Վահանիկը: Նրանց հայրը մեկնել էր ռազմաճակատ ու չէր վերադարձել: Իսկ մայրը դնաց հայրիկի փոխարեն գործարանում աշխատելու:

Մինչ մայրիկը տարված էր մտքերով, Սուսանը վազվզում էր սենյակում:

— Թը'կ-թը'կ դուռը ծեծեցին:

Սուսանը մայրիկի վերմակը ուղղեց ու վազեց դուռը բացեց:

— Այստեղ է Մատինյանը, — հարցրեց ակնոցավոր և շլապալայով մի ծեր մարդ:

— Բժիշկը, — իսկույն անցավ Սուսանի գլխով:

— Իմ մալրիկն է... պատասխանեց նա՝ բժշկին ներս հրավիրելով:

— Վաղո՞ւց եք պառկած, ինչ ցավեր ունեք, — դիմեց նա հիվանդին:

— Երեկվանից, գլուխս է ցավում, հազում եմ, — պատասխանեց հիվանդը:

Բժիշկն սկսեց քննել հիվանդին, իսկ Սուսանը քա-
ղացած հետևում էր բժշկի շարժումներին, թե ինչ կասեր
մայրիկի մասին:

— Գրիպ է, մի քանի օր պետք է պառկեք, իսկ մի
է խնամում ձեզ, — հարցրեց նա չորս կողմը նայելով:

— Այ խնամողս, իմ պիտներ աղջիկը, — ասաց մայրը
ցույց տալով Սուսանին:

Այդ ժամանակ Սուսանը հպարտորեն ձգվեց:

Բժիշկը, նայեց աղջկա գեղեցիկ խելացի աչքերին, -
ժպտաց, հետո սկսեց գեղատոմսեր գրել ու բացատրել:

— Մեկը փոշի է, տաքության դեմ, կխմացնես մայ-
րիկիդ օրը 3 հատ, մյուսը ջրալի դեղ է հազը կտրելու
համար, կխմացնես 2 ժամը մեկ հացի գդալ:

Բժիշկը ցտեսություն արեց, Սուսանը նրան ուղեկ-
ցեց մինչև պատշգամբ ու հարցրեց:

— Բժիշկ, ասացեք, մայրիկս շոտ կլավանա:

— Մի քանի օրից կլավանա, — հույս տվեց բժիշկը հա-
ջաբար նայելով աղջկա աչքերին:

Սուսանը բժշկի վնասուց հետո հանդիստ չնստեց,
դեռ շատ գործ ուներ:

Պիտի խնդրեր հարևանուհի Ջաբելային մայրիկի հա-
մար մածնեսպաս պատրաստի, վահանիկին պիտի մանկա-
պարտեզից բերեր:

Այդ ամենը վերջացնելուց հետո, միայն, երեկոյան
երբ լույսերը վառվեցին, մայրիկի մահճակալի մոտ կանգ-
նեց և ասաց:

— Այս էլ վերջացրի, հիմի ի՞նչ անեմ:

— Ապրես Սուսան, դու քո գործը կատարեցիր այ-
սօր, իսկ ես ոչ... — ասաց մայրիկը ժպտալով:

* * *

Գարնան արձակուրդի վերջին օրն էր, Սուսանը

ուրախ երգում էր վաղվադում, Վահանիկը գնդակ էր գլորում: Մայրիկն առողջացել, գնացել էր երկրորդ հերթի աշխատելու:

Առավոտը պայծառ էր, իսկ ճաշվա մոտ եղանակը ցրտեց, երկինքը ամպեց: Սուսանը Վահանիկի գնդակի ետևից վազեց պատշգամբ ու բացագանչեց.

— Վալ, անձրև է գալու:

Մի քանի րոպե լուռ մտածում էր, հանկարծ պոկվեց տեղից ու որոշեց իր անելիքը, Վահանիկին տարավ հարևանուհու տուն, փոքրիկ լիզիկի հետ խաղալու, ինքը վերարկուն հագավ, մայրիկի կրկնակոշիկներն ու շալը փաթաթեց, դրեց թևի տակ ու տնից դուրս եկավ:

Փչում էր ցուրտ քամի, նա գնում էր արագ.

Սուսանին թվում էր ամենքը՝ մարդիկ, տրամվայը, ավտոները, նույնիսկ ծիտիկները՝ շտապում են իրենց գործին:

Նա մի անգամ մայրիկի հետ գնացել էր գործարան ու չէր մոռացել:

Ահա գործարանի մեծ դարպասը, Սուսանը, ծըլկ, ուղեց ներս վազել, պահակը կանգնեցրեց:

— Մի տեսե՛ք չի էլ հարցնում, այդ ո՛ւր...

— Մայրիկիս մոտ, — համարձակ պատասխանեց Սուսանը.

— Ո՞վ է մայրիկդ, — դանդաղ մոտեցավ պահակը.

— Անուշ Մատինյանը, — պատասխանեց աղջիկը միտքը առաջ գցելով.

— Հա ցեխի վարպետը, ընկեր Անուշը, — գլխի ընկավ պահակը, — դու նրա աղջիկն ե՞ս, դե վաղի մայրիկիդ մոտ:

Գործարանում աշխատանքը եռում էր, Սուսանը այս կամ այն դռնից գլուխը ներս էր տանում, իր սև փայլուն աչքերը ման ածում, մեկ էլ դեմը ձգվեց մայրիկի բարձր հասակը:

— Սուսան, — գոչեց մայրը վախեցած, — ասա ի՞նչ է պատահել։

— Մայրիկ, տես բերել եմ... — ասաց նա ժպտալով։

Մայրը աղջկա ժպիտը տեսնելով հանգստացավ, ասկա կասկածը բացեց, ամեն ինչ հասկացավ — աղջկա գլուխը ամուր սեղմեց կրծքին։ Բանվորուհիները զարմացած նայում էին մորն ու աղջկան։

— Վահանիկին մենակ ես թողել, — հանկարծ հիշեց մայրը։

— Տարել եմ Լիզիկենց տուն։

Մինչ մայրիկը մտածում էր իր հասկացող, իր լավ աղջկա մասին, աղջիկը ագահ աչքերով նայում էր շուրջը։ Երբ ձևող ցեխն էր բանվորների-բանվորուհիներ մեծ մրկ-բառներով, կը՛րտ-կը՛րտ, ձևում էին, նրա կողքի ցեխում կարող մեքենաները քամու պես վզզալով պտույտ էին գալիս ու կարում։

Այ թե ինչ է գործարանը, մտածում էր Սուսանը, արագ բանող բանվորները, արագ պտտվող մեքենաները, կարած շորերը սարի պես գիզված և իր մայրիկը, ոչինչ ամեն կողմից դիմում էին բանվորուհիները։

— Ընկեր Անուշ։

Մայրիկը ամենքին կարգադրում էր՝ այսպես արա, այնպես արա։

Սուսանը հասկանում էր, թե որքան պետքական էր իր մայրիկը գործարանում։

Ամենքը սիրով նայում էին Սուսանին և տաում։

— Ինչ նման է քեզ, ընկեր Անուշ, ինչ ժիր է։

— Իմ Սուսանը շատ աշխատասեր է, փոքրիկ եղբորն է խնամում, տանը ինձ օգնում, — պատմում էր մայրիկը բանվորուհիներին։

— Ստախանովական մորն է գցել, — ծիծաղելով ասացին բանվորուհիները:

— Սուսան տես, ամենքս սոցմրցման մեջ ենք, ձևում ենք, կարում շատ հագուստեղեն, որ սովետական մարդիկ, հագնեն նոր ու գեղեցիկ շորեր:

Սուսանն այդ օրը որքան բան իմացալ, ուրախութունից սիրտը, զարկում էր տիկ-տակ-տիկ-տակ: Մայրիկը նրան ուղեկցեց մինչև դարպասի մոտ ու պատվիրեց.

— Զգուշ, տրամվայից, ավտոյից, իսկ որ հանկարծ անձրև գա.

— Անձրևն ինձ չի թրջի, ես կվազեմ, — պատասխանեց Սուսանն ու թռավ:

Այդ օրը մայրիկն ավելի ոգեվորված էր աշխատում, մատները մկրատի հետ ոչ թե շարժվում, այլ թռչում էին, ձևում էր ու ձևում:

Առաջավորներից առաջ անցնենք շուտ կատարենք մեր պլանները, մտածում էր նա, շատ հագուստեղեն տանք մեր երկրին, ու ծաղկի պես գուգենք մեր երեխաներին:

Նրա աչքի առաջ շարժվում էին հազարավոր երեխաներ թմբլիկ, սիրունիկ նրանց մեջ Վահանիկն ու Սուսանը: Իսկ Սուսանը վաղուց տուն էր հասել ու խաղում էր Վահանիկի հետ մինչև մայրիկի գալը:

Մանկական ուրախ ծիծաղով ու ճշոցներով էր լցվել տունը:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՆԱԼԱՎ ՆԿԱՐԸ

Ամենալավ նկարը	3
Նշանավոր օր	8
Երջանիկ ուղեւորներ	12

ՈՒՐԱԽ ՊԻՈՆԵՐՆԵՐ

Ուրախ սիրոներն	17
Հարգանք	24
Նվերը	27
Ես դպրոցական եմ	30
Ընկերուհիները	36
Ընկերները օգնեցին	39
Հերթապահը	44
Չար կատակ	51


ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇ

Հայրիկի փոխարեն	59
Կարմիր դրոշ	65
Նրանք պայքարել էին	70
Աշխատասեր Սուսանը	77

Խմբագիր՝ Սիմակ
Տեխ. խմբագիր՝ Ի. Վարդանյան
Նախ. սրբագրիչ՝ Թ. Կանքեղյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Մ. Հարությունյան

ՎՖ 00566, պատվեր 673, տիրաժ 4000: Հանձնված է արտադրության
4/XI 1948 թ.: Ստորագրված է տպագրության 16/II -- 1949 թ.

Հայկ. ՄՍՌ Մինիստրների Սովետին կից Պոլիգրաֆ և Հրատարակչ. վարչ.
№ 1 տպարան, Լենինի փ. № 65 1949 թ.



THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

1. The University of Chicago Library is a collection of books, manuscripts, and other materials that are owned by the University of Chicago. It is one of the largest and most important libraries in the world. The library is located on the campus of the University of Chicago in Chicago, Illinois. It is open to the public and is a valuable resource for students, faculty, and researchers. The library has a long history and has been a part of the University of Chicago since its founding in 1837. It has a collection of over 10 million items, including books, manuscripts, and other materials. The library is a major center for research and scholarship and is a source of pride for the University of Chicago.

LIBRARY

2. The University of Chicago Library is a collection of books, manuscripts, and other materials that are owned by the University of Chicago. It is one of the largest and most important libraries in the world. The library is located on the campus of the University of Chicago in Chicago, Illinois. It is open to the public and is a valuable resource for students, faculty, and researchers. The library has a long history and has been a part of the University of Chicago since its founding in 1837. It has a collection of over 10 million items, including books, manuscripts, and other materials. The library is a major center for research and scholarship and is a source of pride for the University of Chicago.

3. The University of Chicago Library is a collection of books, manuscripts, and other materials that are owned by the University of Chicago. It is one of the largest and most important libraries in the world. The library is located on the campus of the University of Chicago in Chicago, Illinois. It is open to the public and is a valuable resource for students, faculty, and researchers. The library has a long history and has been a part of the University of Chicago since its founding in 1837. It has a collection of over 10 million items, including books, manuscripts, and other materials. The library is a major center for research and scholarship and is a source of pride for the University of Chicago.

4. The University of Chicago Library is a collection of books, manuscripts, and other materials that are owned by the University of Chicago. It is one of the largest and most important libraries in the world. The library is located on the campus of the University of Chicago in Chicago, Illinois. It is open to the public and is a valuable resource for students, faculty, and researchers. The library has a long history and has been a part of the University of Chicago since its founding in 1837. It has a collection of over 10 million items, including books, manuscripts, and other materials. The library is a major center for research and scholarship and is a source of pride for the University of Chicago.

22 412

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220026968

124

ԳԻՆԸ 4 Ռ.

